3372

N 139

2171

~~№1344~~

№ 246

# ՀՐԻՏԱԿ
## ՀՕՐ ՈՒՐՈՒՄՆ
## ԱՌ ԴՍՏԵՐՍ ԻՒՐ

Զգուշաւորութեամբ Անգղիականէ ՚ի մեր[illegible] թարգմանեալ բարբառ երկրպագութեամբ

ՊԱՐՈՆ Մ. Ց. ԱԳԱՆՈՒՐԵԱՆՑ՝

Մեծարոյ Աթոռակալի և Անդամոյ գերապատիւ Իմաստախնդրեան Միաբանութեան:

Հաշակեալ ծախուք Օժանդակաց Տպարանիս և ՚ի Հայրապետութեան Երջանկաբար Տ՟ն Տն ԵՓՐԵՄԱՅ Կաթողիկոսին ամ՟ Հայոց:

Արտօնութեամբ նորին Միաբանութեան:

՚Ի ԿԱԼԿԱԹԱ. ՚ի 15 Յուլիսի, 1821:



[illegible]
[illegible] գիմնասիոնէ

Տպագրեալ յընծայեալ Տպարանի Յորդանանեան Պ՟ր Պօղոսի, ՚ի Յ. Տ՟ Յակոբեան:

3372

## Իմ սիրեցեալ Որդւոյ Յովսեփին Աւետ Աշարբեգեան :

Տեսանելով իմ զքոյդ չուրջ զպարկեշտաբարոյիւքն սէր՝ որոյ և առաջն խոստովանի զուլ անդուստ ՚ի բնէ ծնանիլ և սնանիլն քո ՚ի վարս պարկեշտութեան՝ պատշաճ դատիմ զառաջինկայ դուզնաքեայ գործ իմ Թարգմանական՝ որ է հրաշանց պարկեշտանունդ վարուց՝ քեզ վերընծայել արժանապէս, ոչ վասն պարգևելոյ զնոյն քոյին զրուցառե ի սէր՝ այլ սակս ՚ի լրումն անելոյ զյօժարամտուն իմ. որով ՚ի հերուն հետէ փափագէի զանուշաւէտ ծաղիկ իմն ՚ի գրաւորական աշխատանաց իմոց քեզ մատուցանել՝ երկդագոյն քեռդ իմոյ։

Այլ արդ՝ Թէպէտ դուզնաքեայ իմն է առաջինկայ նուէր յօ-

ժառամութեան իմոյ՝ սակայն վս-
տահիմ ՚ի սիրոյ քոյոյ խոստովանիլ՝
զի ընկալ՛նլոց եւ զայն յեղբօրէ
քումմէ այնու յօժարական սիրով
որով հաճի քեզ մատուցանել:

Մնամ քեզ՝

Օրհնօղ Եղբայր և խոնարհ Ծառայ՝

Մկրտիչ Յարութիւն Աղանուրենց:

՚Ի 27 ՝ Մարտի, 1821:

# ԲԱՆ ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ:

Մինչ դաբաղեալ էի յընթերցմունս Անգղիական մատենից՝ դէպ եղև ինձ ընթեռնուլ զառաջին արժանաւոր գործ՝ որ անուանեալն Հրիտակ Հօր ուրումն առ դստերս իւր: Այսպէս՝ մինչ երկրուեանամ խոստովան լինիլ զի թէպէտ չնչին իմն է գիրս այս ըստ ծաւալութեան գրից իւրոց՝ այլ մեծ են այնքան և ՚ի նմին պտղունակեալքն. որք արդարև յօժարամտական արժան են փայփայման. սակս լինելոյ նոցա բարոյական հրահանգ պարկեշտ տարբեր ամուսնեան և կենցաղավարութեան Օրիորդաց. զոր յօրինեաց Անգղիացի վարդապետութեան ընժշկութեան Պարոն Յովհաննիսի Գրիգորեան՝ զորոյ զանձնագրաւն մեծա ընթեռնլեաց էր Անգղիոյ Մեծ մատենին Պարոն Ավգուլին մարդ՝ ընծայեալ եթող որք դստերաց իւրոց իբրև յօժարակ

մեք բազմաօգուտ հրատակս որպէս յայտ է 'ի ներածութենէ գրոյս ։

Այլ արդ՝ Թէ և Գրիգոր վարդապետն ընծայ մատոյց դասերայց իւրոյ զայս գործ արժանաւոր՝ սակայն խոհական գրագէտքն Անգղիոյ առատաձեռն զարժանաւորութիւն գրոյս՝ ամենայն յօժարութբ ընկալան զնոյն. և զգուշաւորութբ բազմիցս տպագրեալ կարգեցին զայն 'ի պէտս մանկանց իւրեանց. և սանին չեւ 'ի կարգի պիտանաւոր գրեանց Անգղիոյ՝ որպէս յայտ է ծանօթացելոցս շուրջ գիրաւորականութբ Անգղիացւոց ։

Իսկ որովհետև անդամք Իմաստախնդրեան Միաբանութեան մերոյ յօժարական ենթարկել եմք զանձինս մեր 'ի ծառայութիւնս ազգի՝ և ջանամք ըստ կարեաց մերոց գրաւորական աշխատութբ նպաստամատոյց լինել նոցա՝ պատշաճ դատեցաք զդեգերեցկապանն գործս զայս յաւելուլ 'ի թիւս գրեանց

Հայաստանեայց. և ըստ տարածի հե-
ղինակացն Անգղիոյ տպագրել Հայ-
կական Օրինագրաց. ուստի և հա-
ւանութեամբ Սրբազանութեն մե-
րոյ թարգմանեցի զայն 'ի բարբառ-
մեր 'ի աշխա բարեկայել սնձգեան
Օրինագրաց մերոց. և այն ունիմք զի
որբեալ ազգ մեր ընկալցի ողորմ զայս
դուզնաքեայ աշխատասիրութեն հե-
ղինակի գրոց և իմ

ԹԱՐԳՄԱՆՉԻՍ

## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ։

Սիրեցեալ Դստերք իմ,

Տարաբաղդ գտայք լինիլ զրկեցեալ 'ի մօրէ ձերմէ յայնպիսի հասակի, յորժամ ոչ կարէիք զգալ զվնաս մահու նորա. և օգնիլ գոնէ ինչ 'ի խրատուց և յօրինակէ նորա:

Մինչչև հասեալ իցէ սորա առ ձեզ՝ նա և հայր ձեր ևս զրաւեալ իցէ 'ի կենաց:

Որոշեալ է իմ զբազում թախծողական խոկմունս զանձերունչ և զանօգնական կացութիւն՝ յոր պարտ է ձեզ լինել. եթէ կամեսցի Տէր բառնալ զիս 'ի ձէնջ նախքան զժամանել ձեր յայնպիսի հասակ, յորժամ կարող իցէք ինքնին գործել և խորհիլ զանձանց ձերոց:

Վարի քաջ ծանուցեմ զազգ մարդկան-
գիտեմ զստութի նոյին · զպատահ-
ումն նոցին · զանհոգութիւն նո-
ցին առ կատարումն իմ պարտուց
բարեկամութեան և մարդասիրութեան:
Գիտեմ զգուշնաքեայ հոգունակու-
թին մատուցեալ անապականն տղայ-
ութեան : Սակաւ բարեկամաց ու-
նիք հանդիպիլ, որք առանց ինչ անձ-
նական օգտի առնիցեն զբարերարութի
ինչ՝ յորժամ անբաւական գտանի-
ցիք 'ի փոխարինել նոցա՝ ատարե-
լով շնորհականութեան կամ հաճոյից
նոցա · և կամ յաջեցման սնաքո-
րոյութեանց նոցին :

Ափոփեալ լինիմ ընդ
խաւարսուն՝ որ բնականաբար ծոցի
յայտնեաց խոկմանց՝ ապաւինե-
լով 'ի քաղութիւն նախախնամութե
այնորիկ որ պահպանեալ է զձեզ մին-
չև ցայսօր · և առնեալ է ինձ զկարի
իմն զոճարծուլի հայեցուած բարե-
բարոյութեանց ձերոց · և գաղանի
յուսալով՝ թէ առաքինութիւնք մոր

ձեր պատճառելոց են ձեզ զերանու-թիւն իմն իբրեւ զժառանգութի :

Ըղձաձկտութիւնն՝ զոր ունիմ առ երջանկութեան ձերոյ՝ ետ ինձ բնաւորել ՚ի մտի առ ՚ի մի հաւաքել զխոկմունս իմ՝ որ զպա-տառնի կենցաղավարութենէ ձեր-մէ : Եթէ առ ժամանակ ևս կե-ցից տակաւին, ստանալ ունիք դուք զայնս մեծագոյն օգտիւք՝ յարմա-րեալ պէսպէս ունակութեանց ձե-րոյ և բնաւորութեանց : Այլ սա-կայն եթէ մեռայց վաղագոյն՝ պար-տիք ստանալ զնոյնոսիկ այսպիսի ան-կատար իմն եղանակաւ իբրեւ զվեր-ջին նշանակ սիրելութեան իմոյ :

Յիշելոց էք դուք ամենե-քին զգորով հօր ձերոյ, յորժամ տմ բան, որ առ նա վերաբերի, գուցէ ՚ի մոռացօնս արկանի : Յոյս ու-նիմ զի յիշողութիւնս այս հարկե-լոց է զձեզ առ ՚ի բարւոք մտադիր լինել խրատուցս, զորս այժմ թո-ղում ձեզ: Հնար է ինձ խնդ-

րել զայն մտադրութիւն առաւել վստահութեամբ, ըստ որում քանզի իմ՝ ցկարի օգտուեալ իբրև որք վերաբերին առ կենցաղավարութիւն ձեր՝ ըստ նմին համաձայն էին բանից մոր ձերոյ. որոյ ենթադատութիւն և ընտրողութիւն կարի առաւել համարէի քան զիմս:

Պարտ է ձեզ ակնկալ լինիլ, զի խրատքն, զորս տաց ձեզ, լինելոց են կարի թերագոյն. քանզի բազմապատիկ անթիւ ծէսք գոն յիգականն սեռի՝ զորս ոչ այլ ոք՝ քայց միայն կին մի կարէ դատել:

Ստանալոց էք զօգուտ մի ունկնդիր լինելով այնմ, զոր թողում ձեզ. լսելոցէք անգամ մի թերևս ՚ի կեանս ձեր զճշմարիտ բանս առն ուրուք՝ որ չունի զօգուտ ինչ շաղոքորթելոյ և պատրելոյ զձեզ. Տաց միահաղայն զխոկմունս իմ թարց կանոնաւորեալ կարգի իրիք. և առ ՚ի խոտորիլ ՚ի շփոթմանէ՝ դասաւորեցից զայնոսիկ միայն ըստ քա-

նի մի ընդ հանրական գլխովք :

Տեսանելոց էք 'ի վերջին աւուրսն իմոյ 'ի նորոյ ապեցելոյ , թէ ի-արք զերանցն սեպութեամբ խոկա-ցեալ են յսէրն ծելոյ` ոչ համբե-րով հերբն դանայիծ վարձեանս , և ոչ ի լև զզերիս հեշտութեանց մերոց . այլ հերբն զընկերս մեր և զհամահա-ւասարս մեր` կարգել սա 'ի մեղմացու-ցանել զօրհնս մեր, և մաքրել զկեանս մեր` որպէս Թովմաս զեղեցիկս ոզէ`

Յառաջ ածեն զբարութս,
Հոգևորեն զերանութիս.
Եւ զաշխատանս ազգի մարդկան,
Անխորժելի գործեն համայն :

# ԿՐՕՆ:

Թուէ և հարիք կրօնից՝ ճշտիւ խօսելով՝ համահաւասարապէս եղեալ կան ՚ի վերայ ամենեցուն՝ այլ տակայն խտրութիւք ինչ՝ որ գոն ՚ի բնական վարս և ՚ի կրթութեան սեռի կանանց, առնեն զքոյնի մի մոլութիւս յաշգի ձերում առաւել ևս տաղտկալի: Անածին խստութիւն օրէնց մերոց և բանութիւն կրից մերոց՝ բորբոքեալ յանգուսպ արձակութենէ՝ որովք բազում անգամ գտանեալ լինիմք ՚ի տղայութեն մերում՝ կարի փոյթ են առնել զբարս մեր առաւել զեղխ և խենէշաբարոյ և զմեզ ասկա- ընդունակ գեղեցկակոյն զգացմանց սրտի: Գեղապանծ փափկութիւն ձեր՝ համեստաբարոյութիւն ձեր՝ և սովորական աստկութիւն կրթութեան ձերոյ՝ զերծ կացուցանեն զձեզ մեծապէս յոյ և իցէ փորձութենէ առ այնոսիկ մոլութիւս՝ որոց յաւէտ եմք մեք ենթակայ.

Անաստուր մեղմութիւն և զգացողութիւն բնութեանց ձերոց յառաջապէս յարմարեն զձեզ առ կիրառութեան այնոցիկ պաշտօնից՝ յորս սիրտն է գլխաւորաբար հոգունակ : Եւ այս ընդ բնաբոյս ջերմութեն երևակայութեան ձերոյ, առնէ զձեզ առաւել ևս ընդունակ զգացմանց պաշտաման :

՚Ի բազում իրս կարօտիք դուք օժանդակութեան կրօնից, առ ՚ի կարող լինել ՚ի ներգործել յաղթաքաջութեամբ և բարեձևութեամբ : Կեանք ձեր թոյլ է բազում անգամ վշտալիր : Ոչ կարէք դիւրին ամենաստուր լինել ՚ի գործս կամ միջիլ ի ճշմարտութիւնս և յանտառակութիւնս, որպէս բազմիցս առնեն մարդիկ, յորժամ ենթակայ լինին անձկութեան աղէտից : Պարտիք դուք տանիլ տխրութեան ձերում ՚ի լռութեան, անծանօթ և անկարեկցեալ յումեքէ : Պարտիք յարաժամ զգենուլ զպայծառ և զշնորհալի հայեցուածս,

յորժամ սիրովք ձեր լցեալ՝ լինին թախծութեամբ, կամ սուզին ՚ի յուսահատութեան: Այս ուրեմն սոսոկական մխիթարութիւն ձեր կարգեալ է ՚ի սփոփանս կրօնի : Այսո քիմբք միայն մարթանայք տանել դուք տնային աղետից առաւել քան զմեզ :

Այլ սակայն զտանիք դուք երբեմն ՚ի կարի իմն տարբեր կացութիւնս՝ որք մշտապէս պահանջեն զհարկաւորութիւն կրօնի : Ընա՛ ոյս ախորժութիւն՝ կամ եթէ հնար իցէ ասել ՝ ընական անստխասիրութիւն սեռի ձերոյ կարի փոյթ է առաջնորդել զձեզ յանառակական կեանս, որ պատէ զձեզ ընդ քօղու անմեղ հեշտութեանց . այլ տկրապէս սպառէ զոգիս ձեր, եղծանէ զողջութիւն ձեր, տկարացուցանէ զամենայն գերազոյն ձիրս մտաց ձերոյ, և բազմիցս և արատաւորէ զհամբաւս ձեր :

Արօն սանձելով զանառակութիւնս ցոյս, և զբոլորոքումն

հեշտութեն տալ ձեզ ունել առա-
ւել զերջանկութիւն և յայնց աղ-
բերց զբօսանաց՝ յորս և կարի յա-
ճախեալ լինի առիթ յափրութեան
և պժգանաց:

Երբեմն է առաւել սաստ-
կայ տրամախոհութեան քան ձեռ-
նարկութեան. կարևոր և շահեկան
մասունք հաւատոյ ըստ բաւականին
են պարզ: Պնդեցէք զմտադրութիւն
ձեր 'ի սոսա, և մի՛ ընդ խառնիք
'ի վիճաբանութեան: Եթէ անկա-
նիք 'ի նա, արկանէք զանձինս ձեր
'ի խառնուրդ մի, յորմէ այլ ոչ ևս
հնար է ձեզ փրծանիլ ընաւին: Ե-
րաստաւոր առնէ նա զբնութիւն ձեր. և
կարծեմ զի չունի զբաւարութ ներգոր-
ծութիւն 'ի վերայ սրտից ձերոց:

'Ի բաց կացէք յամե-
նայն մատենից և յամենայն տեսա-
կէ խոսակցութեան, որոց առարկայն
իցէ առ 'ի յողդողդել զհա-
ւատս ձեր յայնոսիկ մեծագոյն մա-
սունս կրօնի, որոց հնար է ծա-

3372

նուիրել զբարս ձեր, և յորոյ վերայ կախին ակնկալութիւնք ձեր զառյապայ և զմշտնջենական երջանկութենէ :

Ո՛վ բնաւ զբօսեցուցանէք զանձինս ձեր ՚ի կատակաւոր բանիցն հաւատոյ. և մի՛ երբէք ազանկեց լինիք այլոց, ցուցաբծաղել ընդ այնպիսիս, որք են առարկայ խօսակցութեան նորա: Այս բարեսնունդ անձանց ելեցի բարեկան իմն սաստ :

Ո՛վ հաւատայք չայլ ինչ, որ արտաքոյ իցէ Աստուածաշունչ սուրբ գրոց: Կարդացէք զբանս չայնոսիկ՝ զոր ուսանէք սուրբ պատգամս բացատրեալ և ՚ի յայտնութ ածել: Ո՛վ բնաւ ուշխատեցուցանէք զանձինս ձեր յայնպիսիս բանս, որք դեռ մարթինաց երևեսցին յաչս ձեր. այլ բերիցէք ընդ նոսա լռիկ և վայելուչ իմն մտաւորութեամբ: Կարևոր ախորժելի է ինձ խորհրդածել զձեզ առ ՚ի բնութեանսուլ

միայն յայնպիսի հոգևոր զեր-օրոց տառապեալքն ու սիրտս իւրեանց վերուղղեալ, որոց հնար է կազ-դուրել և հոգևորել զջերմեռանդն և զբարեպաշտօն խանդակաթութիւն, որք վայելուչ իցեն առ ՚ի ուղղա-գործել զբարի ձեր. մի՛ ժամավաճառ լինիք յայնպիսի գրեանս, որոց դի-տաւորութի իցէ միայն արկանել զձեզ յանելանելի լաբիւրինթոս կոր-ծանեաց և առասութեանց:

Հաստատո՛ն լերուք ՚ի պաշտամունս պայմանադրել ժամեր-գութեանց ձերոց՝ թէ յառաւօտու և թէ յերեկոյին: Եթէ խոհական իցէ միտք ձեր՝ և անմութն երևա-կայութի ձեր՝ հաստատելոց է առ զզը-րուցատրութիւն իմն ՚ի մէջ ձեր և զերադրոյն Էակին. որ կարի օգտա-ւէտ եղիցի ձեզ ՚ի կեանս ձեր: Տացէ սրբութեանց ձերոց առ ՚ի վայելել չհանապազորդեան զուար-թամտութիւն. շնորհեսցէ զհաստա-տութիւն և զկայունութի անձնայն

առաքինութեանց ձերոց՝ և մարթացուցէք զձեզ, հանդուրժել, ընդ մէջ ամենայն փոփոխականութեանց մարդկային կենաց վայելչականութիւնք և մեծահոգիութեամբ ։

Այժմ է ինձ զի կանոնաւոր լինիցիք ՚ի յաճախել, ձեր ՚ի տուն աղօթից և ընդունիլ զհաղորդութիւն․ մի՛ տայք ոչնչից առ ՚ի արգել, եղանիլ հրապարականն և առանձնաւոր պաշտամանց ձերոց, բայց միայն եթէ ՚ի կեանս հարկեցուցի՛չ պատճառ ինչ պարտաւորեացէ զձեզ, առնել զայն՝ որում չէ հնար ձեզ դիմակալ լինել ։ ՚Ի հրապարակական պաշտաման կայարուք յանձին ձերում նշանաւոր մաքրութին և զծանրահայեցութիւն ։

Մեծագոյն զգուշութիան՝ զոր յորդորեմ զձեզ ունիլ յայսոսիկ պարտականութիւնս ձեր՝ համարեացին բաշխումք ՚ի ծանօթից ձերոց իբրև զյաւելորդապաշտական ինչ Աստուածած առաքելութեանց․ սա-

կայն ՚ի խորհուրդս յայնոսիկ՝ չորք
տամ ձեզ ՚ի վերայ այսր և այլ ամե-
նայն առաքինեաց՝ առնեմ զճշմարտու-
թինչ ունակութեանց և սովորութեանց
ժամանակիս : Գոյ յայժմեան սո-
վորութեան ունայնասիրութիւն և
անառակութիւն իմն , անհոգութի
և ցանցառութիւն իմն դայնորիւք
ոմնեքումբք՝ որք վերաբերին ՚ի պա-
րագայս կրօնի· որք անտարբերոյս ա-
պականել ունին զանձինս ձեր , ե-
թէ ոչ տածեսջիք ՚ի միտս ձեր մա-
նաւորապէս զընդդիմամարտ իմն ունա-
կութիւն, և արասջիք դաշտատական
գործս հանապազորդեան : ՚Ի բաց
խորշեցէք յամենայն անօրէնաց և յա-
ւելորդապաշտութեանց ՚ի պաշտա-
տական պարտականութիւնս ձեր :
Սոքա են սովորական ծածկոյթք կեղ-
ծաւորութեան · կամ գոնեա, ցուցա-
նեն տկարութիւն և կունայնասի-
րութիւն մտաց :

Մի առնէք բնաւին զկը-
րօն ընթակայ հասարակ խօսակցութե

'ի խառնիխուռն ժողովս մարդոց
Յորժամ ոք ներածէ զխօսակցաւն
կրօնիւ, առաւել դժկամակ երեւեցիք
քան թէ յօժարակամ: Այլ և մի՛
տայք ումեք բնաւին արհամարհել ըզ-
ձեզ ծաղրածական բանիւք 'ի վերայ
դաւանութեան հաւատոյ ձերոյ ·
այլ ամենայն զայնպիսի իմն սրտմտու-
թիւն բարկութեան ցուցէք յանձինս
ձեր՝ որպէս թէ կրեալ էիք զանձնա-
կան իմն արհամարհութիւն : Սա-
կայն առաւել հաստատագոյն ճանա-
պարհ խորշելոյ յարհամարհութենէ
ասոր է՝ զի համեստաբարոյութ հե-
ռի կացուցիք զձեզ յայսպիսի զրու-
ցաբանութենէ, և ոչ թոյլ տայցիք
այլոց առ 'ի համարձակութեամբ խօ-
սել ընդ ձեզ զդաւանութենէ հա-
ւատոյ իւրեանց: Տածեցէք 'ի խոր-
սրտից ձերոց զողորմութիւն և զսէր
առ ամենայն մարդիկ 'ի հասարակի՝
թէ և տարաձայն իցեն ընդ ձեզ 'ի
դաւանութիւնս կրօնի իւրեանց :
Տարաձայնութիւն այն հաւատեաւ

կարէ ծագել յայնցանէ պատճա-
ռաց՝ յորս չունիք ինչ մասնակցութ.
և յորմէ չէ հնար ձեզ ածանցել զար-
ժանապատուութի : Ցուցէք կրօնի
զմեծարանս և զյորդութիւն յառա-
կական իւրմ յորդաւորութի՝ պատ-
ուելով զամենայն զպաշտօնեայս նոր-
ին, յոր ինչ դասանութեան և իցեն.
որք ոչ անպատուէին զպաշտօնս իւրենց
կենցաղավարութեք իւրեանց . այլ
սակայն մի՛ թնաւ տայք ՚ի ձեռս նոցա
զկառավարութիւն խղճմտանաց ձե-
րոց. զի մի՛ արատաւորեսցեն զձեզ ու-
նակութեամբք իւրեանց :
Առաւել բարեգոյն արգասիք կրօնի
ձերոյ ծագեսցին ՚. մարդասիրուէ
անտի, զոր ցուցանէք առ ամենայն
մարդիկ ՚ի ներհութիւնս իւրեանց :
՚Ի կէր տուէք զժամն ինչ եկամտից
և ստացուածոց ձերոց ՚ի պէտս ողոր-
մութեան կարօտաւորաց : Սակայն
յայս իրակութիւն աղքատութեան,
եւ տուել յայլ ամենայն բարեգոր-
ծութիւնս ձեր ՚ի բաց խորշեցէք յա-

ճնայնի ՚ի փառամոլութենէ և ՚ի մնապարծութենէ: Ունայնասիրութիւն մշտապէս պատուասեպուցանէ զառաւելայս առաքինութեն: Խոնարհամբաւութիւնն է մի ՚ի բնական պարգևոցն առաքինութեան: Մի երթայք դուք զհետ նորա, և նա հետևեսցի ձեզ: Մի լիցի ողորմութի ձեր պարծևելով զդրամս միայն: Հնար է ձեզ ունիլ զբազմապատիկ դիպուածս առ ՚ի ցուցանել զկաթողնեա, և զողորմածագոյն բարերարութի ձեր՝ ուրանոր ոչ գոյ հորկաւորութիւն դրսմոց: Կեղծուպատիր և օտարոտի այլազանութիւն իմն գոյ ՚ի զգացողութեան, որ պատճառէ ամանց առ ՚ի հեռի կացուցանել զանձինս իւրեանց ՚ի հայեցուածոց ամենայն առարկայի, որ իցէ ՚ի նեղութեան: Մի ընդ ՚ի կիր առնուք զայս սովորութի․ Եւս առաւել, յորժամ բարեկամք և ծանօթք ձեր իցեն առաքեալ ողորմածութեն ձերոյ: Ասուրք տարաբաղդութեանցն և

նեղութեանց նոցին եղիցին ժամա-
նակ ՚ի կիր առնլոյ ձեր զմարդասի-
րութիւն և զսիրելութիւն ձեր,
յորժամ աշխարհ արկանէ զքօղ մոռա-
ցութեան ՚ի վերայ վշտակրութեանց
նոցա: Տեսարան մարդկային թշուա-
ռութեանց մեղմացուցանէ և բա-
րեգործէ զսիրտ մարդոյ. խոնարհե-
ցուցանէ զդիմըմբոստութի ողջանձ-
նութեան և բարեպաշտութեան. և
փոխանակ նեղութեան, որ յառաջ
գայ ՚ի նմանէ, ընդունիք մեծապէս
զպարգև մի կատարելոյ զպարտակա-
նութիս ձեր, և վասն ունելոյ ըղ-
ձանկեալ խանդակաթութիւնս, զոր
ընութիւնն կցեալ է ընդ ամենայն
հարեկցական վիշտս մեր:
Աղանայք մեծապէս ՚ի պատրանս ան-
կանին, յորժամ զմտաւ ածեն թէ
յանձն առնեն ինքեանս առ մեզ սակս
անտարբերուն կրոնի նոցա: Իսկ և
այնորիկ, որք են ինքնին անհաւատք-
աւեն ՚ի ձեզ զտեսակ իմն յանհա-
ւատութեան: Ամենայն ոք՝ որ քաջա-

ծանօթ է մարդկայինս բնութեան, համաձայն լինի յարաբերութիւնս կրօնի ը̄ սեռին ձերոյ գ.ծաւորու-թեանը և խնդակցութեանն որ-ոփ. և մեք հանապազ համարիմք զպա-կասութիւն նորա ՚ի մեզ, եթէ զյա-րացոյց այնր խոստացոյն և աննացի ու-նակութեան, զոր գեր քան զամենայն ոխալանս ձեր առեմք և անպատ-ուեմք: Սու Մարդին համարին չկրօն ձեր եւթ'ն զմի ՚ի գլխաւոր ապահո-վութեանց եւրեանց վասն այնր կանա-ցի առաքինութեան, յորում մեծա-պէս մասնակցութիւնս ունին: Եթէ է ճեպուհ ումն ցուցանիցէ չկեղծեալ հուզակցութի ի՞նչ ընդ ումեմն ՚ի ծէնջ՝ և ջանահնար լինիցի առ ՚ի յողդողդել զհիմունս կրօնի ձերոյ, հաւատաւոր գիտասցէք զի կամ նա յիմարամիտ է, և կամ ունի առ ձեզ զայնպիսի դիտաւորութիւնս, զորս ոչ համարձակի բացայայտաբար խոս-տովանիլ:

Հաւատաւոր մարթ է

ձեզ զարմանալ վասն հրահանգելոյ իմոյ զձեզ 'ի կրթութիւնս եկեղեցւոյ միոյ, որ կարի տարբեր է յեկեղեցւոյ իմմէ: Պատճառ սորա այս է. հայեցայ 'ի տարբերութիւնս եկեղեցեաց մերոց, և տեսի զի չէին նոքա այնքան կարևոր. և նախադասութիւն միոյ քան զմիւսն էր լոկ գործ իմոյ ախորժութեան: Այլ ձեր հրահանգեալ է 'ի կրթութիւնս եկեղեցւոյն Անգղիոյ, առ որ ունիմ զսէր և զյարակցութին, և միտք իմ նախապաշարեալ էր յայնմ աննայնէ, զոր նայն հաւանէր: Ձեր երբէք ցանկութիւն նորա զի մկրտեսջիք 'ի կրօնաւորէ անգղիական եկեղեցւոյ կամ հրահանգեսջիք 'ի կրթութիւնս այնր եկեղեցւոյ: Այլ ընդ հակառակն գեղեցկութիւն պատուասիրութեան նորա՝ զոր ունէր առ փոքրագոյն իր ինչ՝ որ նշանաւակելոց է զիս յաչս աշխարհի, պատճառեաց նմա հոգունակաբար ենթադատել՝ զի աղձանք իւրն երհակաբար

յաջողեսցին : Սակայն չէր հնար ինձ անտայ, նմա յայնմիկ բաղձողականութեան նորին : Յորժամ կորուսի զնա՝ առաւել ևս 'ի նոյն իմում հաստատեցի առ 'ի հրահանգել զձեզ 'ի ներկրթութիւնս եկեղեցւոյն այնորիկ· քանզի զանխլաբար բերկրութի իմ վայելեմ առ 'ի առնել զամենայն ինչ՝ որ թուէր ինձ 'ի յայտանել զսէր և զկարգութիւն իմ վասն յիշողութեան նորա : Մարթ է ինձ առնել զթերագոյն և զանկատար նկարագրութիւն մօր ձեր, մինչ ջանահնար լինիմ առ 'ի ցուցանել ձեզ թէ զինչ է պարտ ձեզ լինել :

## ԲԱՐՈՅՔ ԵՒ ՎԱՐՔ։

Որ ՚ի գլխաւոր կատարելագործութեանց իգական սեռի՝ է համեստաբարոյ ամօթխածութիւն այն՝ առանձնաւոր փափկութիւնն այն, որ հեռի է ՚ի տեսանելեաց հասարակութե և անկարգ է ևս ընդ հայեցուածոց գովաբանութե, որ տակաւին ըերկրեցուցանէ զսիրտս ձեր:

Յորժամ աղջիկ մի դադարեց յամաչելոյ, կորուսանէ զամենակարող ազդեցութիւնս գեղեցկութեան: Անհնարին զգացողութիւնն այն, զոր ցուցանէ նա՝, համարելի է տկարութիւն և ծանրութիւն ՚ի մեզ, որպէս բազմիցս առնլ է իմ զփորձ նորա․ սակայն ՚ի ձեզ մանաւորապէս է հաճելի: Իմաստակք, որք համարին գիտնականս իմաստասէրս, համարձակեն թէ ընդէ՞մ կին ոք ամաչեսցէ, յորժամ խիղճ մտաց նորա անխայթ իցէ ՚ի յանցանաց իւիք: Բարեպատեհ պա-

տասխան լինի է խնդրոյս այսմիկ, թէ բնութիւնն արարեալ է զձեզ ամաչել, յորժամ չիցէ յանցուցեալ ձեր և զոչ իմիք. և պարտաւորեալ է զմեզ ՚ի սիրել զձեզ քանզի առնէք նոյնպէս : Ամօթխածութիւնն այնքան հեռի է ՚ի հետեւելոյ հարկաւորապէս յանցանաց իրիք, մինչ զի է ուղղորական ընկեր անմեղութե : Համեստաբարոյութիւնս այս, զոր այնքան հարկաւոր համարիմ լինել ՚ի ձեզ, բնականապէս լուռ կացուցէ զձեզ յընկերակցութեան, և առաւել ևս ՚ի բազմաժողով ընկերակցութեան : Արք գիտնականք և ուսաւորք ոչ երբէք փոխանակեսցեն զլռութիւնս զայս ընդ թմրութե : Հնար է ումեք հաղորդակից լինել ՚ի խօսակցութեան Տարց առատանելոյ զմի բառ : Արտասանութիւնն ՚ի դէմս ցուցանէ զայս, և այս ոչ երբէք ծածուկ մնայ ՚ի նկատող աչաց, «Բաղձր է ինձ զի ունիցիք զվայելուչ ծանրութիւն իմ ՚ի վերայ ձեր, այլ

'ի զայն համարձակ հեշտութիւն , զայն անպատկառ գէմս , որք տհաճ և անախորժ երևին ընկերակցուն : Եթէ ոք 'ի սեպուհեաց խօսեսցի ընդ ձեզ , եթէ ոք 'ի մեծատոհմից զրուցատրեսցի ընդ ձեզ , մի՛ տայք ըղձակաթ ուշադրութեան և երևութական ընտրողութեան ձերում մատնել զզգացմունս սրտից ձերոց : Հպարտութիւն ձեր յայսմ վայրի պահպանեսցէ զձեզ յայնմ ցածուէ՝ յոր ունայնամտութիւն ձեր ընկղմեսցէ զձեզ: Մտախոհ լերուք զի ծառայել առնէք զձեզ յաչս ընկերակցութե , և խայտառակէք զսեպուհ ոմն միայն առ 'ի բարձրացուցանել զինքութի այլոյ , որ գուցէ կարծի թէ պատուէ զձեզ յորժամ խօսի ընդ ձեզ : Զրուցատրեսջիք ընդ անձինս աստիճանաւորս այնու ծանրահայեաց համեստաբարոյութեամբ, որ արգելուցու զմերձաւորութիւն հեռաւորագոյն ընտանութեան , և յայն սակս արգելուցու զնոսա 'ի կարծե.

լոյ զինքեանս վեհ ձեր:
Իմաստութիւնն է կարի վտանգա-
ւոր ձիր իմն զոր սեփականել կա-
րեք : Պարտիք պաշտպան լինել
նմա մեծաւ խոհեմութեամբ և բա-
րեբարոյութ, եթէ ոչ ստեղծեսցէ
ձեզ բազմաթիւ թշնամիս : Իմաս-
տութիւնն կատարելապէս զուգըն-
թաց է ընդ համեստութեան և քաղ-
ցրաբարոյութեան . սակայն սոքա
Հոգիէ ուրեմն գտանին միաւորեալ :
Իմաստութիւնն այնքան շողոմող է
ունայնութեան, մինչ զի նոքա որք
սեփականեն զնա, լինին արբեալ,
և կորուսանեն զամենայն զիշխա-
նութիւն անձին :
Օ՛ռէարձարանութիւն է
տարբեր իմն առաքինութ . շարժեսցէ
մեծապէս զսիրտս ընկերակցաց ձերոց .
այլ սակայն զգո՛յշ լերուք թէ մ՛արդ
պարտիք կառավարել զնա : Մեծա-
գոյն թշնամի է գեղեցկաբարբառութեան,
և առաւել գերազանցութե պատո-
ւոյ : Զինչ է՛ դմա երբեմն պատ-

ձայնել ձեզ զգուշանս , այլ սակայն ոչ երբեք շնորհեսցէ ձեզ զպատիւ :

Ո՛վ գո՛յշ լերուք նաև յորժամ բացատրէք զծնունդս բարեմտութեան ձերոյ : Այնպէս երևեսցի՛ թէ կամիք մեծագոյն ցուցանել զձեզ քան զամենայն ընկերակիցս ձեր : Այլ սակայն եթէ դէպ լինիցի ձեզ ունել զհրահանգութիւն ուսման իրիք , ուսուցէք զայն խորին ծածկուք , և տալով ՚ի սեռէ արանց , որք հասարակաբար հայրին նախանձանօք և չարախնդաց ակամբք ՚ի կիրն մի ուսեալ և քաջակիրթ , և սեփհականող մեծի հանճարոյ և գգօնութեան :

Խոնհականն և բարեպաշտօն անձն անցանէ պանդանէ ,զծծութեամբս այսուէրիկ : Այլ սակայն այսպիսի անձն հաղիէ ուրեմն պատահեսցի ձեզ . և եթէ դիպուածով իմն պատահեսցի ձեզ , մի՛ ըղձակերտէք առ ՚ի ցուցանել նմա զլիակատար արծարծ զիտութեան ձերոյ : Եթէ երբեք դէպ լինիցի նմա առ

՚ի տեսանել զձեզ , հնար է նմա փութանակի գիտել ինքնին թէ որչափ առաւածին միտք ձեր ՚ի գիտութեան, և եթէ ունիցիք ՚ի ձեզ ըզբարեբարոյութիւնս կամ զարժանապատուութիւնս, և դաշնեալիք զնոսա ՚ի թագաւորեան, անտարակոյս հաւատասցէ նա զի ունիք դուք առաւել քան զոր ակնկալեալ է ձեզ : Մեծագոյն արհեստ հաճոյանալոյ ՚ի զըրուցատրութիւն՝ կայանայ ՚ի հաճեցուցանել զընկերակիցս ընդ կատարելութիւնս նոցա : Ունկն մատուսջիք յօժարամտութեամբ՝ քան խօսեսջիք զբարեզարդութեանց նոցա :

Զգո՛յշ լերուք ՚ի բամբասանաց , և առաւել յորժամ ընթակայ իցեն այնց ամենք սեռին ձերոյ : Ամենեքեան անգոսնեն զձեզ վասն ունելոյ ձեր զայս ախտ մոլութեան · զոր կարծեմ չլինիլ իրաւացի : Որք անկանին ՚ի խորին յանցանս այսր մոլութեան վասն անձնական օգտից իւրեանց : Եւ քանզի

օգտուտք ձեր յաճախակի առաւել են քան զմերս, և զգացմունք սրտից ձերոց ազդողագոյն են քան զմերս, առաւել ևս մարթ է ձեզ անկանիլ 'ի փորձութիւն այսորիկ մոլութեան : Այդորիկ աղագաւ կարի զգո՛յշ լերուք յարատաւորելոյ զհամբաւս սեռին ձերոյ, և առաւել յորժամ դէպ լինիցի նոցա դիմադարձ լինել ձեզ սակս մեր : Այս առաքինական ունակութիւն երևի ինձ հաստատագոյն յարացոյց վեհանձնութեան և ճշմարիտ մեծամտութեան :

Կարեկից լերուք աղէ խորով ցաւակցութեամբ Ը տարաբաղդին կանայս, և առաւել ընդ այնոցիկ, որք թշուառական են եղեալ 'ի չարաբարոյութենէ արանց : Կալարուք 'ի ձեզ զծածկեալ իմն հրճուանս, կամ լաւ ևս ասել չպարծանսն առ 'ի լինել բարեկամ և ապաւէն տառապելոց, այլ առանց ունայնասիրութեամբ ցուցանելոյ աշխարհի զայն

ձերդ կարեկցական գործ :

Համարեցէք զամենայն տեսակ տգեղութեան խօսակցութեան այնքան անօթալի լսել ինքեան, որքան տաղտկալի յաչս մեր : Ամենայն երկայրաբանութիւն է այսօրինակ : Արձակութիւն ուսմանց տղայոց տալ նոցա զբօսաւորել ընդ այնպիսի խոհ ըստ՝ է որ կարի փափուկ են ականջք նոցա՝ ի զայրանալ և տհաճիլ, յորժամ ՝ի բերանոյ ձերմէ արտահանիցի այն, կամ յորժամ լսիցէք զայն ատանց դաւոց և տաղտկութեան : Կուսական մաքրութիւն այնպէս փափուկ է բնութե, մինչ զի անհնար է նմա լսել զպէսպէս խօրաց ատենից ինչ արատաւորութե : Յոյժ ժամ մերթ է ծեզ հեռի կացուցանել զձեզ յայսպիսեաց : Ոչ որ՝ բայց միայն յիմարն և տգէտն արհամարհեսցէն զկին մի վասն այնպիսի խօսակցութեան, զոր տեսանէ զի պատճառ է նմա զառանպանս . և ոչ ես համարձակեցի արհամարհել զնա,

եթէ կրեն այն վայելուչ իմն ցաւ-
մամբ սրամտեցի ընդ արհամար-
հանս նորա: Մեհանձնութի իմս
գոյ ՚ի ճշմարիտ առաքինութեան,
որում մարթ է ահացուցանել, կամե-
նալսես և զանամօթս ՚ի մարդկանէ:

Պուցէ աշխարհ կշտամ-
բեսցէ զձեզ վասն չափազանց զե-
ղեցկաբարոյութեանց ձերոց: Զա-
փազանց գեղեցկաբարոյութիւն համա-
րակօրէն նշանակէ զորոշեստակու-
թիւն փափկութեան: Զեն ինձ
կամք ստտանօր զի շփոթեսջիք լինե-
լոց փափկութեան. այլ կամիմ զի
սեփականեսջիք զնա: Սոյն և իցէ
եղանակաւ՝ բարեգոյն է կրել զխա-
ղաւորութիւն եղանելոյ կատակելի
քան տաղտկալի:

Մարդիկ զանգասաւոր
եղիցին վասն ամօթխածութեն ձե-
րոյ. Հաստատի արասցեն զձեզ կի-
րճակազոյն և աներկիւղ վարքն ա-
ռաւել սիրելի և փարելի հանդի-
սացուսցեն զձեզ: Այլ ամենայն հա-

Հաւատացէք ինձ զի ոչ պահեն նորա զկարգ մաքրութեան և անկեղծութեան, յորժամ ասեն ձեզ զայս բան ։ Գիտ-ակեմ զի արձակագոյն բարքն երբեմն արարոցէ զձեզ հաճոյականս երբե զընկերականս, այլ սակայն նուազե-ցուսցէ զպատուասիրութիւն ձեր երբե-մկանայս · այս է տարորոշութիւն ինչ կարևոր ; ընդ որ բազումք 'ի ձէնջ են անծանօթ ։ Ճուսկ ամենայնի կամիմ զի դիւրին և բաց իցէք 'ի խօ-սակցութիւնս ձեր ։ Մարթ է ինձ միայն ընձեռել ձեզ զխանի մի խրատ՝ որոց հնար է կանոնաւորել զբարս ձեր ։

Պահեսջիք զհարազատ պատուասիրութիւն ճշմարտութեան ։ Սուտն է անարգ և ատելի իմն մոլութիւն ։ Ծանօթ եմ քանի մի կանանց բարեբարոյից՝ որք այնքան մոլեալ էին զհետ նորուն՝ մինչ զի ոչ հաւատալի երևէին յորժամ առա-նէին զպատմութիւն ինչ . եւ առ-աւել եթէ լինէին 'ի նմա գործք հրաշից ; և կամ նոքա լինէին առար-

կայք պատմութիւն այնորիկ ։ Տկա-
րութիւնս այս ոչ յառաջացաւ յախ-
տաւոր օրէնէ, այլ էր սոսկ ելք ու-
նայնասիրութեն և կամ անսանձ երե-
ւակայութեան ։ Չեն ինձ կամք
առ ՚ի սոփեստ արկանել զայնոսիկ
զոմարձակիս յօրինուածով զոմար-
ձակի պատմութեան՝ որոյ դիտումն
միայն է առ ՚ի պատճառել չանձնա
ուրախութիւն ։

Գոյ ՚ի սեռի ձերում
տեսակ իմն համեստութեան հոգւոյ
և բարուց՝ որ է կարի զօրաւոր. ոչ
կամիմ ասել զանվերահասու մտա-
դրութիւն զայն՝ կատարեալ ժպտումն
զայն՝ որ ծիծաղի ՚ի վերայ ամենայ-
նի ։ Այս յառաջ գայ կամ յար-
ուեստակուէ մեղմութեան, և կամ
՚ի կատարեալ զգաստութենէ ։

Գոյ տեսակ իմն փափ-
կասիրութեան, որ յարդիս սկսեալ
է բռնանալ ՚ի միջի սեպուհեաց երկ-
րիս այսորիկ. ընդ որ տիկնայք մեր
են այնպէս անձանց՝ որպէս այլ

ամենայն կանայք ՚ի վերայ երկրի · յուսամ զի տա պատճառ իրութեան սեռի իւրեանց մշտապէս անմասն և անծանօթ գտանիցին մոլութեն այնմիկ՝ որ է մոլութիւն փափկանաքոյ ՚ի կերակուրս ։ Նախատելի և արհամարհ մոլութիւն իմն է սա ՚ի մէջի արանց . այլ ՚ի մէջի սեռին ձերոյ անվայելուչ և տաղտկալի իմն է գեր քան զամենայն բան ։

Իւրաքանչիւր ոք՝ որ զար-ձուցանէ զյիշողութիւն իւր ՚ի շրջանս ամաց անցելոց՝ անտարակոյս տեսանելոց է զի նշանաւոր փոփոխականութիւն իմն պատահեալ է ՚ի պատիւս և ՚ի յարգութիւնս՝ զորս յառաջնումն մատուցանէին արք առ կանայս ։ Առանձնարանք նոցա մնան անբնակ · և յետ ճաշի և ընթրեաց սեպուհքն անհամբերութբ սպասեն մինչ ՚ի մեկուսանալ նոցա Ոչ մարթ իցէ աստանօր մանրամանաբար ճառել՝ թէ զիարդ դէպ եղև նոցա կորուսանել զայս պատուա-

սիրութիւն՝ որում բնութիւն և քաղաքավարութիւն այսպէս բարեպէս արժանացուցանեն զնոսա : Փափկասէրութիւնք երկրի նորա կախին զպատճառաց բազմապատկաց և անթուելոց : Այսչափ միայն ասացից՝ զի բարք ախինաց դարուն անցելոյ էին ամօթխած և փառացի յոյժ : Իսկ այժմ համարեսցին զառաւ նոցա խստագոյն և յաւէտ որդապաշտական : Օ՛ինչ և էր վարք նոցա ՚ի նախնումն՝ հաւատարիւ հնար էր այնմիկ առ ՚ի հանդիսացուցանել զնոսա առաւել պատուելոր :

Այն մի գեղեցկաբարոյ շօրէն այլ ամենայն իրաց յարարչագործութեան՝ ունի զկայելուչ իմն նպատակ անձնկալութեան՝ որով հնար է նմա երևիլ յաչս աշխարհի մեծաշահեկանութեամբ : Որ ՚ի հաստատուն առնել զայս նպատակ անձնկալութեն՝ պէտք են մեծագոյն դատողութեան և բազմածանօթ խելամտութեան ընդ մարդկայինս սրտի :

Յեղանակէ այժմեան կանայք բարուց՝ տիկնայք թուէին ակնունիլ զի յողժող երևեցին ՚ի վերայ մեր ՚ի ձեռն ամենակատար ապացուցութե անձնական գեղեցկութեց իւրեանց, ՚ի ձեռն լինելոյ իւրեանց մշտապէս առաջի աչաց մերոց ՚ի հրապարակական տեղիս, ՚ի ձեռն պըրուցատըրելոյ ընդ մեզ այնու անպատկառ համարձակութեամբ՝ որպէս մեք առնեմք ընդ իրերաց, ՚ի կարծոյ ՚ի ձեռն համանման լինելոյ մեզ՝ ըստ որում կար նոցա խօսանայ: Այլ սակայն տակաւին մի ժամանակ և փորձառութիւն ցուցանելոց են զյիմարութիւն տղայորին անկրթութե և բարուց:

Ներգործութիւն գեղեցկութեանց բարի կնոջ ՚ի վերայ սրտից մարդկան, հանձարեղաց առաւել մարդկանն և խոհականաց, առաւել է քան զոր նայն կարծէ լինիլ: Ոչ զան նոքա զհաճոյացուցիչ երևոյթն շողն, այլ չէ հնար նոցա և

ոչ կամք առ 'ի եղծանելոյն ։ Այլ եթէ կրեն այն եղեալ իցէ 'ի մտի իւրում առ 'ի արտայայտել զգեղեցկագիտութիւն իւր, անտարակոյս կարող է առնել զայն. հնար է նմա փութանակի փոխադրել զհրեշտակ մի 'ի կարի ցածագոյն աղջիկն մի ։

Բնածին վեհանձնութիւն իմն հանճարիմաց համեստութեան պահանջեմք 'ի ձէնջ, որ է բնական պաշտպանութիւն ձեր յընտանի խօսակցութեանց մարդկան, և զոր մարթ է ձեզ իմանալ յառաջ քան իրազեկ լինել իցէ ձեր զօգտէն պահելոյ զձեզ սուրբ և անարատ յամենայն անձնական համարձակութեանց ։ Բազմապատիկ անթիւ շքեղութիւնք և աշխուժութիւնք գեղեցկութեան պարտին պահպանիլ անարատապէս առ 'ի երջանկացուցանել զբազուկս առն այնորիկ երջանկի, որում տայք զսիրտս ձեր. այլ սակայն եթէ ունիցի նա սակաւ ինչ մի առաքինական զգացողութիւն, արհամարհեալ ատեսցէ

զնոսա՝ եթէ դիտացէ զի յառաջ քան զլալելեալ իւր 'ի նոսա, յիսուն ամք ձեռնամուխ իցեն լեալ 'ի նոսա խառնակութեամբ : Այսպիսիքն այն, որով կրեն համարեսցի զամենայն արձակութիւն իբրև անարատ՝ եթէ առաքինութիւն նոցա իցէ յակատանի, է կարի անվայել և վտանգաւոր, և մխտակալ է եղեալ բաղմաց 'ի սեռէ ձերմէ :

Թո՛յլ տուք ինձ այժմ առաջի առնել ուշադրութեան ձերում զգերազանցութիւնն այն, որ ըստ ինքեան ոչ է այնքան առաքինութիւն համարելի, որքան զարդ այլ ամենայն առաքինութեանց: Սա այնպիսի իմն է, որ հեղու զանպատմելի հոյեցուցանէ 'ի վերայ ամենայն ակնարկութեանց, ամենայն շարժմանց և ամենայն տրամախոհութեանց, զորս արտասանէք: Սա է ընծեռել գեղեցկութեան զայնպիսի իմն փայլիւն, առանց որոյ անհնար է նմա լինել հաճելի

յաչս անհատից: Սա ըստ մարմին
է առաքինութիւն իմն անձնական.
յորոյ սակս և համարելի է պարգև
բնութեան. սակայն քանզի իմ գլխա-
ւորագոյն կնմանէ են իբր և զառա-
քինութի մտաց: Դա կարծոյ սա է կա-
տարելութի ախորժուն, փայելչուն
և բարուց. սա է ամենայն առաքինու-
թիւն և գերազանցութիւն շնորհա-
լի և սիրելի յոյժ:

Գուցէ զմտաւ ածիցէք
զի կամիմ արտահանել յանձնէ ձեր-
մէ զամենայն զարդ բնութեան, և
առնել զձեզ միանգամայն տրտմեստա-
ցերս: Քա՛ւ լիցի ինձ առնել
զայդ: Կամիմ զի սեպհականեսջիք
զամենակատար անկեղծութիւն սր-
տի և վարուց: Կա՛մ է ինձ զի սեպ-
հականեսջիք զվեհութիւն առանց
հպարտութեան, զհեզաբարոյութի
առանց դածութեան, և զպարզ գե-
ղեցկաբարոյութիւն առանց արուեստա-
կանութեան: Մի՛ լորն խօսէք ըստ

մատոյց իմոց յորժամ առեր զՅուսայէ՝
Շնորհ փայլէ ՚ի քայլս նորա.
և Տէր երկնից յաչս նորա .
նա և յամէն շարժուածս նորին
վեհանձնութիւն և սէր փայլէին :

## ԶԲՕՍԱՆՔ :

Իւրաքանչիւր եղանակ կենաց ունի զբօսանս՝ որք են պատշաճաւոր և բնական նմա : Ի կիր առէք ՚ի զբօսանս յայնոսիկ զամենայն ախորժութիւնս ձեր , մինչ պահէք ՚ի ներքուստ չկարգս վայելչութեան այնորիկ , որ պատշաճական է սեռին ձերոյ ,

Ոմանք ՚ի զբօսանաց սատարիչ են առողջութեան . այսինքն ազգի ազգի կրթութիւնք· ոմանք են կարի պիտանացու և օգտաւէտ , այսինքն՝ զանազան ասղանագործութիւնք կանանց և տնային զբաղմունք ազ-

գանձանց . ոմանք են դերբայանց կատարելութիւնք . այսինքն զգեստ, պար, երաժշտութիւն, և նկարչութիւն : Այնպիսի դերք՝ որք կատարելագործեն զիմացականութիւն ձեր, մեծացուցանեն զգիտութիւն ձեր և հրահանգեն զառաքինական խոհութիւնս ձեր, համարելի են դերագոյն քան զոսոկ զբօսանս: Գոն ևս քանի մի տեսակք զբօսանաց, որք ոչ պիտանացու են համարելի և ոչ իւր զարդ, այսինքն՝ զանազան տեսակք խաղուց :

Յօժար է ինձ յառաջապէս առաջի առնել ձեզ զայնպիսի կրթութիւնս՝ որք պատրաստեսցեն զձեզ առ 'ի յաճախանել շրջիլ արտաքս և 'ի բացօդեայս, որք են ձեռտուութիւն և հեծումն 'ի վերայ ձիոց : Սովորք հնար է ձեզ շահիլ զյօրեղութիւն կազմուածոյ ձերոյ, և զգեղեցկաշքութիւն կերպարանաց ձերոց : Եթէ սովորոյթ լինիցի ձեզ երթալ արտաքս մշտապէս զա-

Հաւորակօք և կատարօք, բնութեան ձեր այնքան ՚ի յամօթութիւն և ՚ի դանդաղկոտութիւն փոխեցի, մինչ անհնար լինի ձեզ երթալ արտաքս ՚ի տանէ ձերմէ առանց նոցա: Սոքա են զօրէն այլ ամենայն իրաց փափկակեցութեան պիտանացու և բարեյարմար յորժամ բարեխառնօրէն ՚ի կիր առնուցուք զնոսա. այլ տակայն յորժամ անցանիցէք զնոքաւմբք անոյշ քան զչափն, եղիցին ձեզ պատճառ ունայնասիրութեան և վնասակարութեան :

Խոհականութիւն ողջանձնութեան ձեռոյ է պարտականութիւն, որոյ պարտաւորեալ էք առ ձեզ և առ բարեկամս ձեր: Մատողջութին հազիւ ուրեմն տկարանայ առ ՚ի ունել զներքնորդութիւն իւր ՚ի վերայ ոգւոյ և բնութեան մարդոյ: Ամենաշքեղագին զգօնութիւնք և ամենակատար նորութիւնք մտաց ունին յանձնառակի զկայտառութիւն՝ քօղարկեալս. Մարմնական կաղմ-

ճածոց , զորովք կարի շուտափու-թեամբ զանց արարեալ անհո-գանան : Շռայլութիւն նոցա կար-գեալ է 'ի յընթերցողութիւնս և 'ի տարածումն գրաճորականն պատա-մունս , որք են համահաւասար թշնամիք առողջութեան և գեղեց-կութեան :

Թէպէտ քաջողջութիւն անձին է մի 'ի մեծագոյն բարեաց կենցաղավար-ութեն , սակայն մի՛ երբէք պարծա-նօք խօսիք զնմանէ , այլ վայելեցէք 'ի նմա խորին լռութեամբ սրտի :

Որք այնպէս բնականա-բար համեմատ համարիմք զտկարու-թիւն և դիւրաբեկութիւն կանանց ընդ փափկութեան կազմուածոց նոցա , մինչ զի յորժամ կին ոք խօսի զան-հնարին կարողութենէ իւրմէ , զմե-ծագոյն ախորժակէ իւրմէ , և զան-խոնջ զօրութենէ իւրմէ , որով տա-նի բազմապատիկ աշխատութեանց , դարձուցանեմք զուշադրութիւն մեր 'ի նկարագրութենէ անտի նորա , ան-

յայտ ՚ի նմանէ ։

Պիտաւորութի ուսուցանելոյ ձեզ շատաշանագործութիւն, զշահաւորագործութի՛ւն և զայլ օրինահանգէտ գործս, ո՛չ միայն կարանայ ՚ի ճշմարիտ արժանաւորութեն այնոցիկ ամենայնի, զորս հնար է ձեզ առնել ձեռամբք ձերովք իսկ, որք առաջարկեն փանաքի իմն և համառօտելի, այլ զի կարող լինիջիք առաւել ևս կատարելութեամբ խելամուտ լինել ընդ այնպիսի գործս, և ուսուցանելով հրահանգել ՚ի նոսա շաւիղս : Միւս գլխաւոր առարկայ սորին է, զի կարող լինիջիք փայելուչ իմն գեղեցկութբ անցուցանել նովիմբ զքանի մի առանձնաւոր ժամս, զորս պարտիք հարկաւորապէս անցուցանել ՚ի տան : Մեծ իմն օգուտ է երջանկութեան կենացու ՚ի առնել զգիւրութիւնս ձեր անկախս յայլոց ամենից՝ որքան հնարաւոր իցէ : Յանձնականի թափառալով առաջք ՚ի յայս զբօսանութեն

և գիտութեան՝ կորուսանէք զպատուաւորութիւն ամենայն ծանօթից ձերոց ․ կորս վշտագնեալ զզուեցուցանէք այնոցիկ յանձն խոհական այցելութեամբք ․ որք ի ձեռն առաւել խոհական կառավարութեան եղիցին հաճելի և փափագելի :

Տնային անօրինութիւն գերդաստանի միոյ է միանգամայն պաշտօն կնոջ ուրուք ․ և ընձեռէ զբազմապատիկ առարկայս նիւթոց խոհականութեան և բարեմասնութեան : Եթէ երբէք դէպ լինիցի ձեզ ունել զկառավարութիւն գերդաստանի միոյ , պարտ է ձեզ կարի ուշադիրս շրջահայեաց և ժամանակածու լինել ի նմա ․ նա և չէ մարթ ձեզ զանց առնել և անհոգանալ վասն պաշտօնատարութեանց վասն լինելոյ ձեր փարթամ և մեծատուն ․ թէ և ամբաւիր երևեացի այս , սակայն մնա՝ որ չհետ զայ կանգառութեան այնմիկ եղիցի առաւել ինքնագոյ և հաստատուն :

Տարակուսիմ մեծապէս՝ թէ զհնարս խորհրդատրեցից զձեզ՝ ՚ի սակս ընթերցմանց գրոց և մատենից: Ուր ինչ անպատշաճութիւն յընթեռնուլն ձեր զպատմութիւնս, կամ յուսանիլ զինչ և իցէ զարուեստ և զգիտութիւն, առ որս հանճար և ըղձաձկտութիւն առաջնորդեսցեն զձեզ. բովանդակ մատեան արարչագործութեան բացեալ կայ առաջի աչաց ձերոց, և մատուցանէ զբազմապատիկ զուարճութիւնս և զբօսանս: Եթէ հաւատի լինէր՝ զի բնութիւն զարդարել էր զձեզ այնպիսի ունակութեամբք յօժարամտութեան և խոհականութեան, որք մնալոց էին ՚ի ձեզ և իշխել ունէին ՚ի վերայ ապագայ վարուց և կենցաղավարութեան ձերոյ, անհնարին բերկրուք և հաճութեամբ ջանալոց էի առ ՚ի կանոնաւորել զընթերցողութիւն ձեր այնպիսի իմն եղանակաւ, որում զօրաւոր լինէր առ ՚ի հաստատուն առնել զյօժարամտութիւն ձեր յա-

մենակատար ճշմարտասիրութեան և
գեղեցկադարդութեան : Այլ սա-
կայն՝ յորժամ զմտաւ ածեմ՝ թէ զի՛
արդ դիւրին իմն է առ ՚ի կարդու-
բել զերբևակայութի օրինօրդի միոյ ;
և զի՛արդ դժուարին առ ՚ի զգայուն
առնել զոհիոտնք մշտապէս և սաստ-
կապէս, թէ զի՛արդ յօժարական ձեռ-
նամուխ լինի նա յամենայն գեղեցիկ
մտախորհութիւնս, և զի՛արդ դիւ-
րաւ հնար է նմա պատարագել զնմ
ունայնասիրութեան և կամ վայել-
չականութեան, կարծեմ հաւա-
տեաւ զի վնաս ինչ առնելոց եմ ձեզ
եթէ արուեստակութեամբ. ստեղ-
ծանիցեմ ՚ի ձեզ զյօժարութի իմն ;
զոր եթէ չիցէ բնութն երբէք պար-
գևեալ ձեզ, հնար է ձեզ առ ՚ի վա-
տացուցանել նովիմբ զազագայ վարս
ձեր : Չեն ինձ կամք առ ՚ի առ-
նել ձեզ ինչ նոր · այլ միայն կա-
միմ գիտել՝ թէ զի՛նչ է արարեալ ըն-
ձեր բնութիւնն, և կատարելագոր-
ծել զձեզ յարարչագործութեան նորա :

Չեն ինձ կամք զի զայնպիսի մտածողութիւնս ունիցիք, որոց հնար է վշտացուցանել և նեղել զձեզ. կամիմ զի զայնպիսի մտածողութիւնս ունիցիք, որոց հնար է միօրինակ և հաստատապէս առաջնորդել զձեզ 'ի կեանս ձեր, և զայնպիսի մտածողութիւնս, զորս սիրտք ձեր կատարելապէս հաւանին, և զոր չէ հնար ձեզ թողուլ և կորուսանել վասն ամենայն ընչի, զոր աշխարհս այս կարէ մատուցանել:

Զգեստն է հարկաւոր իր իմն առ կանայս: Բնական է ձեզ սէր զգեստու, որոյ աղագաւ վայելուչ է և իրաւացի: Բարեմտութիւն կանոնաւորելոց է զծախս 'ի զգեստս ձեր. և բարեյօժարութիւնն տալոց է ձեզ պչրանօք զհանդերձս այնպիսի ձևին, որում հնար իցէ ծածկել զամենայն արատաւորութիւն և ընձեռել զանհնարին օգուտ գեղեցկութեանց ձերոց, եթէ երբէք իցէք գեղեցիկ: Այլ ամենայն

ճողում վայելչութիւն և մեծ խո-
հականութիւն խնդրին 'ի կատարե-
լումն կանոնիս այսորիկ : Կին մի
գեղեցկատեսիլ առաւել շահեկա-
նութք ցուցանէ զգեղս դիմաց իւր-
ոց , յորժամ բացում անգամ երևի
'ի թագուցանել զնոսա : Ամենագե-
ղեցիկ լանջք բնութեան ոչ է այն-
քան գեղեցիկ , քան զոր երևակայ-
ութիւնն ձևացուցանէ աչաց մարդ-
կան : Ամենակատար գերազանցուն
զգեստու երևի և գտանի գոլ ամենա-
վայելուչ՝ և կարի սակաւ 'ի կիր ա-
ռեալ : Մի՛ երբեք յօժարամիտ
երևեսջիք 'ի սէր զգեստուց ձերոց
յարտաքին յերևոյթս միայն : Ստա-
ցջիք զունակութիւն իմն մշտատև
վայելչութեան զգեստուց . այնպէս
զի՝ 'ի ժամանակին յայնմիկ՝ յորում
հանեալ իցէք զհանդերձս ձեր՝ և յոր-
ում կարի անզգոյշ և անհոգ իցէք ըզ-
նոցանէ՝ չունիցիք երբէք զտեղի ա-
մաչելոյ և պատկառելոյ 'ի կերպա-
րանաց ձերոց : Չէ հնար ձեզ գիւր-

տա հաւատալ՝ թէ որքան համարիմք զձև զգեստուց ձերոց իբրև զնշանակ և զցուցանող վարուց ձերոց: Ունայնասիրութիւն, անապարծութիւն, անմաքրութիւն և յիմարամտութիւն երևին ընդ նոյն: Գերազանց պարզազգեցութիւնն է ճշմարիտ ապացոյց առաքինութեան և վայելչութեան:

'Ի պարի պարտիք 'ի կիր առնուլ զվայելչութիւն և զշնորհաշեղութիւն իբրև ՚ զգլխաւոր պարագայս նորա: Կամիմ զի պարեօջիք զգաստութեամբ. այլ սակայն մի' երբէք թոյլ տայք ձեզ զուարճանալ այնպիսի բերկրութեամբ՝ մինչ 'ի մոռացօնս արկանել զառաքինութիւն սեռի ձերոյ: Բազում օրիորդք պարեն բերկրամտութեամբ և միամտութեամբ սրտի, մինչ այլք կարծեն զնոցանէ ունիլ զայնպիսի խոկմունս, որք անծանօթ են նոցա գլխովին: Կարծեմ զի ոչ գոյ խրախճանութեան հանդէս ինչ, որ

բերկրեցուցանէ զմիտս խոհականաց և զուարճաբանից, որպէս Թատրոնական հանդէսն: Այլ սակայն տխուր եմ զի սակաւ հազներդունիք դոն յԱնգղիացիս տիկնաց տեսանելոյ արժանի. որք չիցեն վնասակար առաքինութեան նոցա: Զի հնար ձեզ դիւրաւ իմանալ զդիտողութիւն զորս սեպուհք արժանաւորք առնեն ՚ի վերայ վարուց ձերոց յայսպիսի տեղիս: Մարդիկ յաճախակի քաջածանօթ են բարուց ամենավատ անձին սեռին ձերոյ. և ՚ի ձեռն այնր ծանօթութեան կարէ դիւրաւ դատիլ զբարուց այլոց կանանց: Առաքինազարդ օրիորդ մի բազում անգամ լսէ զանվայելուչ խօսս հայեցուածովք իմն անխռովութեան. քանզի իբրաւապէս ոչ հասկանայ զնոսա: Այլ սակայն ոմանք կարեն անողորմաբար խոստովանիլ զայս յառաջ եկեալ յայնմ կառավարութենէ հայեցուածոց, զորս առեն թէ սեփականէք ՚ի ձեզ

առաւել քան զնեռ մեր. և կամ անձինք չարախնդայք և նախանձաբեկք համարին զայս պատճառաւ 'ի խստամաբրտ վստահութենէ :

Երբեմն օրինակ մի ծիծաղի միամտութեամբ և անկասկած անմեղութեամբ վասն ոչ այլ իրիք պատճառի, եթէ ոչ առ 'ի ծիծաղեցուցանել ընդ իւր և զայլ անձինս. յայնժամ համարին զնա գիտել առաւել քան զոր առնէ : Եթէ երբեք դէպ լինի նմա իմանալ զանվայելուչ իւր, վշտագնի հոգի նորա ընդ ծնշողական տագնապս. տեսանէ նա զմխտաակրութի համեստութեան իւրոյ զզայուն իւր. եղանակաւ. և 'ի նմին ժամու յամօթի հարկանի առ 'ի դիտակ ցուցանել զինքն ընդ միամտութիւն իւր : Միայնակ միջոց հեռացուցանելով 'ի ձէնջ զայսպիսի անպատշաճութիւնս է՝ զի երբեք չզնասցիք առ 'ի տեսանել զայնպիսի թատրոնական հանդէս՝ որ մանաւորաբար հակառակ

է վայելչականութեան : Եղերերգութիւնն ոչ ենթակայացուցանէ զձեզ տագնապի ամօթահարութեան : Տխրութիւնք նորա մեղմացուսցեն և ազնուացուսցեն զսիրտս ձեր :

Պարտ է ինձ սակաւ ինչ խօսիլ զխաղուց · քանզի տիկնայք երկրիս այսորիկ տակաւին անծանօթ են միանգամայն նմա : Այս է ապականագործ և աններողելի իմն մոլութիւն · և որովհետև պատճառօղ է ամենայն ազգ անձնական և խարդագրգիռ կրից , մանաւանդ որպէս ատելի է ՚ի ձեզ : Չունիմ ինչ ընդդիմութիւն ՝ եթէ զբօսնուցուք ընդ տեսակ իմն խաղու իբրև զմասն ինչ զբօսանաց ձերոց · եթէ այն՝ զոր կորուսանիցիք՝ եղիցի այնքան դուզնաքեայ՝ մինչ ոչ օգտաւէտ և ոչ վնասակար եղիցի ձեզ :

Յայսմիկ՝ որպէս և յայլ ամենայն հարկաւոր պարագայս վարուց՝ ցուցէք զհաստատուն յամառութիւն և անդրդուելութիւն : Այս ոչ

է բնաւին անվայելուչ բարեբարոյ-
ութեան և համեստութեան այնմիկ՝
որք այսքան զգուշեալ և փայփայե-
լի են ՚ի սեռի ձերում: Այլ ընդ
հակառակն ընձեռէ զայնպիսւոյ իմն
զուարթութի մեղմաբարոյ և քաղց-
րագին բնութեն՝ առանց որոյ փոյթ
է նա առ ՚ի փոխարկել յանվայելչա-
կանութիւն : Նա պատուելի հան-
դիսացուցանէ զձեզ յաչս մեր, և
բարձրացուցեալ մեծացուցանէ ՚ի
տեսանելիս մեր :

# ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ, ՍԷՐ ԵՒ ԱՄՈՒՍ-ՆՈՒԹԻՒՆ:

Պարկեշտութիւն և անառակութիւն՝ որք բանանան յաշխարհի 'ի վերայ կենաց համեստաբարոյ մարդոյ, թափուր կացուցանեն զախորտ նր 'ի կաթողնելոյ, 'ի հաւատարիմ և 'ի հաստատուն բարեկամութենէ, որպէս և ապականեն զնա բազում օրինակաւ: Կարի օգտաւէտ եղիցի ձեզ ունիլ՝ զընտրելագոյն բարեկամս. քանզի հնար է նոցա նպաստամատոյց լինել ձեզ 'ի ձեռն խրատուց և բարի գործոց իւրեանց: Այլ տակայն ինքնագոյ բաւարարութիւն այն, զոր բարեկամութիւնն ընձեռէ կաթողնեալ, հաւատարիմ և խոհական որոտի, ըստ ինքեան բաւական է 'ի յարգորել զմարդիկ առ 'ի զհետ երթալ բարեկամութեան: Ընտրեալ ձեր զբարեկամս՝ զլաւագոյնս զհետ երթիցէք՝ բարեպաշտաց և հաւա-

տարիմ անձանց ։ Եթէ նոքա եւս սե-
փականեացն զփորձառութիւն եւ ըզ-
հանճար, եղիցին առաւել հաճելի
եւ պիտանացու ընկերակիցք ձեր ։
Ուս առաւել պարտ է ձեզ բարեկա-
մութիւն առնել ընդ այնպիսեաց,
որք 'ի ժամանակի մանկութեան ձեր-
ում վարեալ են ընդ ձեզ խանդակա-
թութեամբ ․ յորժամ անկարող էիք
առ 'ի երախտահատոյց լինել նոցա
փոխարինաբար ։ Այս է շնորհա-
պարտութիւն իմն, որոյ վասն չէ
հնար ձեզ լինել երախտագէտ յոյժ ։
Յորժամ ընթեռնուցուք զայս, բնա-
ւորապէս 'ի միտ ածեսջիք զբարե-
կամ մօր ձեր, որում այսքան պար-
տական էք դուք։

Եթէ երբեք բարեբաղ-
դապէս հանգիպեսջիք ամանց, ո՛րք
արժան իցեն անոճան բարեկամաց,
բացէք զծածուկս սրտից ձերոց 'ի
լսելիս նոցա կարի իմն անկասկած
յուսադրութեամբ ։ Մի 'ի խրա-
տուց աշխարհի է՝ երբեք չյայտնել

ումք ըզաղօնիս սրտից ձերոց, զի
մի՛ գուցէ փառահամբաւութիւն կը-
բեսջիք յորժամ նոքա՝ ի յայտնութի
ածեսցեն զնոսա . այլ սակայն այս
է խրատ իմն ոչհասկացող մտաց և
անհաւատարիմ սրտի, բայց միայն
յորժամ չհեա եկեսցեննմա բազմա-
պատիկ փառասիրութիւնք և ձախող-
ութիւնք: Անարգել բնութիւն՝ յոր-
ժամ արգելանի բարեպատեհ խոհե-
մութեամբ՝ արտօյէ զձեզ լաւ ամե-
նայնի առաւել երջանկագոյն քան
զարգելեալ և զկասկածոտ բնութիւն,
թէպէտ և երբեմն դէպ լինիցի ձեզ
կրել ՚ի նմանէ զանաջող ելս: Ան-
հաւատարմութիւն և կասկածոտու-
են երկոքին պարագայք ժամանակի
և փորձառութեան · այլ սակայն սո-
քա են դգուցուածք անհաճոյք, զոր-
և չէ պարտ նախատեսանել յառաջ
քան զժամանակ նոցա:

Այլ սակայն որքան և
անկասկած լինիցիք ՚ի խօսիլն ձեր
զգործոց և զխրախտութեանց ձերոց

մի՛ բնաւ բացայայտէք զգաղտնիս բարեկամի միոյ ցայլ ոք : Ո՛. յորքինկ է՞ն աւանդք սուրբք , որք ո՛չ են ձեր և ո՛չ պատկանին ձեր , և ո՛չ դուք իրաւունս ինչ ունիք առ ՚ի գործածել զնոսա :

Գոյ այլ իմն ինչ , յորում կարծեմ կի բարւոք է լինիլ ծածուկ և անյայտ՝ ոչ այնքան վ՟ն շարժառիթից խոհեմութեան, որքան վասն պատճառաց վայելչականութեան . այսինքն՝ ՚ի գործս բարերարութեանց . Թէպէտ և չէ պարտ կնոջ ումեք առ ՚ի ամաչել , ՚ի երևելոյ գործ մի արժանապատուի , այլ ամենայն բնութիւն՝ որոյ կարողութիւն առաւել է քան զզօրութիւն [illegible]՝ կցեալ է ընդ նմա դամօթխածական իմն զգայութեամբ : Այն մի բարեբարոյ ակնածին ամաչել , յառաջ քան զգիտել իւր թէ առնէ զբարերարութիւն . և յորժամ ապարդիւն լինին ամենայն ջանք ծածկելոյ զբարերարութիւնն յինքենէ , տեսանէ զհամբաւ և զհա-

մնասուութիւն իւր վնասեալ և ձա-
խողակութիւնս կրեալ ։ Արժեմ
զի զսոյն զայս ունի զգալ՝ յորժամ
չիցէ հաւաստի զի ընկալնլոց է ըզ-
փոխադարձութիւն սիրոյ իւրոյ ։
Արժեմ զի չէ պատշաճ ամենեւին
կատարելութեան և առաքինութեանց
ձերոց առ ՚ի յայտնել ումեք զծա-
ծուկս սրտից ձերոց ։ Այլ սա-
կայն զուցէ սխալիմ ՚ի կարծիս իմ ։
Այս և պտուղ է ինձ զգացուցանել,
ձեզ զի ՚ի պատճառս խոհեմութեան
փոյթ տարջիք առ ՚ի հեռի կացուցա-
ցանել զձեզ ՚ի վնասուց բացայայ-
տութեան գաղտնեաց ձերոց ։ Գաղտ-
նիքս այսոքիկ թէպէտ կարի հար-
կաւոր երևեսցին ՚ի դիտողութեան
ձերում, սակայն դուզնաքեայ և
անարժան համարեսցին ՚ի բարեկա-
մաց ձերոց · որոց չէ հնար թա-
փանցել ՚ի խորս զգացողութեանց
ձերոց · այլ ընդ հակառակն համա-
րեսցին զնոսա իբրև զառարկայ ին-
կատակաբանութեան ։ Այսորիկ ա-

ծագած գաղտնիք սիրահարութեան առաւել, քան զամենայն այլած հո-գունակութեամբ պահպանին: Այլ սակայն եւք բացայայտութեն գաղտ-նեաց սիրահարութեան եղիցին ձեզ կարի տարժանաչիր և խստագին, քանզի առաքինի և խոհական անձն ոչ երբեք արժանապատիւ համարի զսիրտ մի՝ կարի զգածեալ ունա-կութեամբք սիրահարութեան:

Սակայն այսուրիկ եթէ եր-բեք դէպ լինիցի ձեզ ունել զբա-րեկամ մի, որում յայտնեսջիք ըզ-ծածուկս սրտից ձերոց, հաւանօրէն լերուք յառաջագոյն զարժանապատ-ուութենէ և զզգուշապահութե-նէ: Որ երբեք ունիք զայնպիսի ոք իբրև զբարեկամ, որ իցէ արժանի և ամենահաւանեցեալ. ևս առաւել ե-թէ կենցաղավարիցի նա ընդ առ-նուրում երջանկութեամբ և բերկ-րութեամբ: Այսպիսի կին մի՝ թէ և կարի արժանաւոր և բարե-համբաւ՝ ՚ի պէտս է անշքոյշ ժա-

մանակս արասցէ զյիշողութիւն զաղտնեաց ձերոց , զոր չէր հնար նմա յայտնել յայլում ժամանակի և այլոյ ումեք՝ բայց միայն տաններում. և ոչ այր նորա յայնպիսի պարագայս սիրտհարութեան կարկանեսցէ զանձն իւր ընդ այնպիսի պարտաւորութեամբ ծածկապահութեան և պատուոյ՝ որպէս թէ յառաջագոյն եդեալ էիք ՚ի նա զհաւատ ծածկութիւն՝ ես առանել ՚ի վերայ այնպիսի իմն առարկայի միոյ , ընդ որ աշխարհ վարի այսքան անհոգութեամբ :

Եթէ այլ ամենայն պարագայք բարեկամութեան համանըման իցեն իրերաց , մեծ օգուտ եղիցի ձեզ առ ՚ի ունիլ զսէր բարեկամութեան ընդ միմեանս : Շաղկապք արենակցութեան և մերձաւորութեան ձեր ընդ միմեանս , ձևացուցանեն զառաւել հաստատութիւն միաւորութեան՝ բարեկամութեան ձերոյ : Եթէ եղբարք

ձեր ունիցին զբարեպաշտութիւն անխափանելոյ զսիրտ՝ հակամիտելս ՚ի ձեր բարեկամութեան, և սեփականիցեն զճշմարտութիւն, զպատիւ, զխոհականութիւն և ըղ-բարեմտութիւն, եղիցին յարմարագոյն և պատշաճագոյն առարկայք բարեկամութեան: Դնելով ձեր ըղ-յաւաստգրութիւն ՚ի նոսա՝ մարթ է ձեզ ընդունիլ զամենայն տեսակ օգտաւէտութեան, զոր ակն ունիք ընդունիլ ՚ի բարեկամութէ արանց առանց անպատշաճութեան իրիք, որ հետևորդ է այսպիսի միակցութեն ը՞նդ սեռին մերոյ:

Զգո՛յշ լերուք առ ՚ի ձևացուցանելոյ զբարեկամութիւն ընդ ծառայից ձերոց: Մեծութիւն անպատշաճաբար ՚ի գործ եդեալ՝ փոխարէն յարհամարհ հպարտութե. որո՞չ կարէ ունիլ զսէր բարեկամութե, վասն զի ոչ կարէ գտանել զսէր՝ որ իւր ինքեան համահաւասար. և այնքան հակամիտ է ՚ի մոլութիւն շողո.

քրդութեան՝ մինչ ՚ի գլխաւորս ա-
ծել զայն եւս և ՚ի աղօթաւորաց և
՚ի ծառայից ։ Մասն այսորիկ որսա-
կից բարեկամք հպարտ և ամբար-
հաւաճ անձանց են դժուծ սենե-
կապետք և սպասահարկու կանայք ։
Ցուցէք սպասաւորաց ձերոց զմեծ-
մարդասիրութիւն և զխանդակա-
թութիւն ․ որքան հնար իցէ ձեզ՝
արարէք զկացութիւնս նոցա մխի-
թար և դիւրին ․ այլ սակայն եթէ
առնիցէք զնոսա բարեկամս ձեր՝ ա-
պականէք զնոսա և յածուցանէք
զանձինս ձեր ։

Մի թոյլ տայք ումեք
ընաւին զի ՚ի ձեռն կեղծուպատիք
քօղոյ բարեկամութեան այնքան ընտա-
նաբար մերձեսցի ընդ ձեզ, մինչ զի
կորուսցէ զպատշաճաւոր յարգութիւն
ձեր ։ Մի թոյլ տայք ումեք առ ՚ի
վշտացուցանել զձեզ վասն այնպիսի
առարկայի՝ որ իցէ տհաճոյ և անվա-
ւեր ․ և կամ մոլորեցուցանել զմիտս
ձեր յայնպիսի բանս, յոր դիտաւորք

ծութիւնք ձեր իցեն հաստատապէս յաւիտեան : Նաշունք ասացեն ձեզ թէ ամօթխածութիւն ոչ է պատշաճ լինել յազատութեան և յորձակութեան յայնմիկ՝ զոր բարեկամութիւնն ընձեռէ : Այլ սակայն յատկացն յորդութիւն իմն պարտի լինել ՚ի բարեկամութեան՝ որպէս ՚ի սիրահարութեան : Քանզի տորա հնար է ձեզ սիրել իբրև զերեխայս այլ չէ հնար ընդունել զսէր իբրև զհանճարար ոք :

Բնութիւն և ունակութիւն սրտի ձերոյ պատճառեն ձեզ առաւել ևս փութանակի և ջերմեռանդն գոքար մտանել ՚ի մեր բարեկամութեան քան զայր : Այնքան հզօրեղ է բնականն յօժարամտութիւն ձեր առ այն՝ մինչ զի յանձնեսցի տանէք զբարեկամութիւն՝ որոց զհետ գայ ստրջանք և ապաշաւանութիւն . և յայն սակս բարեկամութիւն ձեր լինի ձեզ պատճառ մտայուզութեան և վշտակրութեան :

Այլ իմն մեծ խոչըն-դակն մտերմութեան և հաստա-տութեան բարեկամութեան մերոյ է յաճախել օգտից մերոց ՚ի գնացս անձնահաճութեան՝ փառամոլութե և ունայնասիրութեան : Սան այլոցիկ պատճառաց առաւել նախ-ընտրելի է առ ՚ի յառաջագոյն անյաճախ առնել զբարեկամուի ձեր ընդ արանց : ՚Ի մէջ այլ ամենայն բացայայտ օգտից անարգել հաղոր-դակցութեան երկուց ազգից՝ պատ-ճառէ նա զնախանձաւորութիւն և զջանասիրութի երկաքանչիւր ումեք առ ՚ի լինել փարելի և գերազանց. և ՚ի ձեռն որոյ փոխադարձ գե-րազանցութիւնք և ազնուութիւնք նոյն ծանուցեալ լինին միմեանց. և միաւորին համակրութեամբ : Եւ որովհետեւ ոչինչ վերաբերի յօ-գուտ նոցա, չէ հնար լինել տեղի ինչ նախանձորդութեան և կասկա-ծանք ինչ թշնամանութեան : Բա-րեկամութիւն առն միոյ ընդ կին

ոք մշտապէս միակցեալ է այնպիսի իմն խանդակաթութեամբ, զոր ոչ երբէք զգայ նա վասն սիրոյն իւրոյ, Եւս և ուրանօր չիցէ մտանակցութեն ինչ սիրոյ: Ապա յայսմանէ իբրացեալ էմք մեք զբնական պահանջողութենէ իմիք, զոր ունիմք առ պաշտպանութիւն և բարի գործս մեր. վասն այսորիկ զգամք 'ի մեզ զառաւելեալ պարտականութիւն իմն պատուոյ տալ 'ի ծառայել ձեզ, և պահպանել զանապական իմն ծանկութիւն յայնպիսի բանս, զորս բարեկամօրէն յայտնէք մեզ:

Այլ սակայն 'ի կէտ առէք զայսոսիկ դիտողութիւնս մեծաւ զգուշաւորութեամբ: Հազարաւոր կանոնաց բարեսիրութ և բարեհամբոյք միշտ կրեցին և վատահամբաւեցան յայնպիսի արանց՝ որք մերձենան առ նոսա ընդ պատճառ անուամբ բարեկամութեն: Թէպէտ և երևեսցի այր ոք կարի պատուական՝ սակայն բարեկամուն

Դորա տա կին ոք այնքան մերձ է միաբանութեան՝ մինչ զի եթէ կինն այն կարի գեղեցիկ իցէ ՚ի կերպարանս իւր՝ անտարակոյս գտցէ փութանակի զ՚իւրահար մի ուրանօր հաճեր միայն առ ՚ի հանդիպելի քաղցրականի միում: Սան որոյ տուք ինձ արձակութիւն առ ՚ի զգուշացուցանել զձեզ տատանօր յայնմ անկարութենէ՝ որ կարի հասարակ է ՚ի մէջ ունայնախորհ կանանց · այսիւրքն՝ ՚ի մտածողութենէ անտի՝ թէ իւրաքանչիւր այր՝ որ փոյթ ունի զձէնջ մտանաւորաքար՝ է սիրահար ոք: Ոչինչ արասցէ զձեզ առաւել ես ծաղրելի՝ քան թէ կարծել ձեր զառնէ ումեմնէ լինել սիրահար ձեր, որ գտցէ անգամ մի ևս չիցէ հայեցեալ ՚ի ձեզ այնպիսի դիտաւորութեամբ, և ունիլն ձեր զայնպիսի հայեցուածս, որք կարի հասարակ են ՚ի մէջ ունայնախորհ կանանց յայսպիսի տարակայս:

Գոյ տեսակ իմն անըս-
տոյգ սիրտհարութեան, զոր յա-
ճախակի 'ի կիր առնուն ոմանք. և
եթէ խոհական և փորձառեալ իցեն
մտօք ձեր՝ տեսանելոց էք զայն լի-
նիլ կարի անփոյթ: Այսպիսի ան-
ձինք ընկերակից լիցին ձեզ 'ի հրա-
պարակական տեղիս. և պիտանա-
ցու երևեսցին ձեզ բազմապատիկ
հարկաւոր սպասաւորութեամբք.
զորս անձինք աստիճանաւորք ոչ
իմանան նոյնասարաս մտաւորութբ.
կամ ոչ ունին զպարապ առ 'ի
փոյթ կալնուլ զնոցանէ. և կամ
կարի բարձրայօն են առ 'ի հոգու-
նակ լինիլ զնոցանէ: Համարեցէք
զհտպտանս այսպիսի մարդոց իբրև
զխօսս, որովք զբաւցաբանեն ընդ
իւրաքանչիւր ումեք բարեծնունդ
կնոջ, որում են ծանօթ: Անար
է նոցա ունիլ ընդ ձեզ զտեսակ
իմն ընտանութեան. զոր բարե-
պատշաճ վեհանձնութիւն բարուց
ձերոց մարթի տանձահարել:

Գոն ոմանք յարանց, Ո՛ որս հնար է ձեզ համրել իբրև ըզ-բարեպատեհ ընկերակիցս, իբրև զարժանապատիւ անձինս, իբրև զառաքինագործս և իբրև զխոհականս · որոց խօսակցութիւնք բառ իմիք գերազանց են քան զոր անձինք սեռին ձերոյ սովորաբար զրուցաբանեն : Յիմարութիւն իմն է առ ՚ի զրկել զձեզ ՚ի գիտանացու և ՚ի բարեպատեհ ծանօթէ ումեքէ վասն ասելոյ ունայնախորհ ոմանց՝ թէ նա է սիրական ձեր : Այսպիսի անձն հաճեսցի ընդ ընկերակցութիւն ձեր առանց ունելոյ զայլ իմն դիտաւորութիւն ՚ի վերայ անձին ձերոյ :

Նոքա՛ որոց դիտաւորութիւնքն և ախորժակքն համաձայն են միմեանց՝ բնականապէս ախորժին առ ՚ի կենցաղակցիլ ընդ միմեանս, թէ և ոչ ոք ՚ի նոցանէ ունիցի զաւէք երկարագոյն ընտանեկցութեան : Բայց որովհետև այս

համաձայնութիւն դիտաւորութեց և ախորժանաց պատճառէ զաւաւել կատարեալ մերձաւորութիւն իմն քան զբարեկամութիւն, խոհեմութ եղիցի ձեզ առ ՚ի հսկողական աչօք հայիլ ՚ի ձեզ, զի մի՛ սիրաք ձեր ընկերին հրապուրեալ՝ մինչչև ծանուցեալ իցէ ձեր զնմանէ: ՚Ի նմին ժամու ոչ կարծեմ զի անձինք սերին ձերոյ գտանեսցին յայսմ մասին աշխարհի ունիցին զայն զգացողութի՝ որ պատճառեսցէ նոցա զայսպիսի մերձաւորութիւն: Այն՝ որ հատաքակօրէն յորջորջի ՚ի մէջի ձեր սէր՝ է առաւել ևս երախտագիտութիւն և շատագովութիւն առնն այնորիկ՝ որ նախադասէ զձեզ գեր քան զամենայն անձինս սեռին ձերոյ. և յաճախակի ամուսնանայք ընդ այսպիսի արանց առուղ ինչ անձնական արժանապատուութեամբ կամ սիրով: Ընդարև առանց մեծ իմն ընտանուր խոհականութեան և մտանաւոր ճոխութեան և փարթա-

մութեան կին որ յայսմ աշխարհի
սակաւ ախորժեցի մտանել յառա-
գաստ ամուսնութեան ՝ի սակս սիրոյ ։
Արատ իմն անանդեալ
է ձեզ կարի խոհեմաբար՝ զի սէրն
չէ պարտ սկզբնաւորիլ ՝ի ձէնջ՝
այլ պարտի լինել պատճառեալ ՝ի
խանդակաթութենէ միոյն որ առ
ձեզ ։ Զորդ՝ կին մի խոհական և
առաքինի հանդիպեցի բազում մար-
դոց ՝ որոց չէ հնար հայիլ ՝ի նա
իբրև յանձն որ արժանապատուի-
յոյժ ։ Այլ սակայն ՝ի միջի սա-
կաւուց եւս մեծ բարեբաղդութիւն
է՝ եթէ որ ՝ի նոցանէ խելամուտ
լինիցի յորդութեան նորա մանա-
ւորաբար ։ Սէրն առ մեզ գրեթէ
է ցնորական և խեղաթիւր յոյժ ,
և ոչ մնացէ մշտապէս ուրանօր
բանականութիւնն պատուիրէ նմա
մայ ։ Սակայն եթէ որք ՝ի նոցանէ
կարի յոյժ հարեսցի ՝ի սիրոյ նո-
րա՝ անհնար է նմա լինել յաշխարհի
տառ այրն այն՝ որ միայն է հա-

ճեցեալ և սիրակեզ եղեալ ընդ բարեբարոյութիւն նորա:

Որովհետև բնութիւնն ոչ է պարգևեալ ձեզ զայն անհուն կարգադրութիւն ընտրողութեան՝ զոր մեք վայելեմք. յայն սակս իմաստնաբար և ողորմածութեամբ ընձեռեալ է ձեզ զմեծագոյն հաստատութիւն յօժարամտութեան վասն այսպիսի առարկայի: Հաճոյական առաքինութիւնք ումանք յորդորեն զսեպուհ ումն առ 'ի բարեյօժար և բարեկամ լինել ձեզ: Յընթացս ծանօթութեան իւրոյ բուսուցանէ 'ի խորս սրտի իւրում զսէր իմն առ ձեզ: Յորժամ խելամուտ լինիք դուք դիտաւորութեան նորա՝ հարկանիք 'ի պարտուց երախտագիտութեան. երախտագիտութիւնս այս փոխարկի 'ի նախադասութիւն ինչ. և նախադասութիւնս այս գրեթէ 'ի վերջոյ փոխարկի յաստիճան իմն սիրելութեան, և ևս առաւել յորժամ յանդիման լինիցին նմա խոչ

և խուլթք և դժուարութիւնք : վասն զի այսոքիկ են և երկրայինն են ծնողացն գրգլուք սիրելութեն , և կերակուր սիրոյ յերկոսին սեռս մարդոյ : Եթէ սիրելութին այսո- անանկ ոչ յառնէր 'ի սրտի ձերում 'ի մէջ եղբարց 'ի ձէնջ չէր հնար ումեք ամուսնանալ դուզնաքեայ ինչ սիրով և խանդակաթութեամբ :

Այր առաքինի և խո- հեմաստ ամուսնանայ ընդ կնոջ ու- մեք՝ քանզի սիրէ զնա առաւել յոյժ քան զայլ ամենայն կանայս : Նմա- նապէս կին առաքինի և խոհական ամուսնանայ ընդ նմա՝ քանզի ար- ժանապատուէ զնա և սեռանէ զնա նախընտրական և նախադասելի է յաչս նորա : Այլ սակայն՝ եթէ այր ոք տարաբաղդապէս հարեսցի 'ի սիրոյ այնպիսի կնոջ՝ որոյ սիրտն իցէ յառաջագոյն այլում նուիրեալ՝ սիրահարութիւն նորա փոխանակ վերընդունելոյ փոխադարձաբար ըղ- ալիտուր ինչ հաճոյական՝ եղանի

Պատահար եւ թշուառացուցիչ յոյժ. եւ եթէ պնդեսցի զհետ նորա նեղացուցանելով եւ վշտացուցանելով զնա՝ առնէ զինքն նոյնգունակ առարկայ մշտաւոր կատակութեան եւ ատելութեան նորա :

Ներգործութիւնք ոխոյ առ մարդիկ զանազանին եւ փոփոխին ՚ի ձեռն տարբեր բնութեանց եւ խառնուածոց նոցա : Այր հնարագէտ եւ նենգամիտ հայթհայթեսցէ յինքեան զամենայն տեսակ կեղծուպատիր բնութեան եւ խառնուածոց առ ՚ի դիւրաւ խաբել եւ պատրել զմատաղահասակ օրիորդ մի բարեսիրտ , աշատամիտ եւ առաքինի , եթէ տեսցէ զնա միանգամայն անապահով եւ անզգոյշ : Բայց ունակութիւնք այսպիսի օրիորդի միոյ ոչ լինին մշտապէս բաւական առ ՚ի ապահովութի նորա : Աղջամղջին եւ խոտորնակ ճանապարհ խորագիտաց են անքննելի եւ անըմբռնելի պատուական եւ վսեմախոհ մտաց :

Մոռնեմ զի հետագայքն են ճշմարտագոյն ներգործութիւնք պատուականն կերպ 'ի միջի արանց, և կարի դժուարին առ 'ի ունել զկեղծ երևոյթս: Այր ազնուաբարոյ յաճախակի ակներև կացուցանէ զկիրս իւր 'ի ձեռն անհնարին հոգունակութեան ծածկելոյ զայն, և ոչ առնել յորժամ դոյզն ինչ յոյս ունիցի զյաջողութենէ: Ճշմարիտ այրն ընդ ամենայն կացութիւնս իւր խնդրէ զծածկումն և ոչ երբէք այն ունի զյաջողումն: Ապացուցանէ սա զայրն զայն ոչ միայն պատուական՝ այլ կարի յոյժ մեհերոտ 'ի բարս իւր առ սեռանելիս կիւրն այնորիկ զոր սիրէն: Առ 'ի թագուցանել զերկիւղն զոր կրէ 'ի նմանէ՝ հնար նմա երբեմն պատճառել զհաճութիւն, այլ սակայն կարի անհեթեթ իմն եղանակաւ սնեալ զայն 'ի սրտի իւրում և իւրոյն փափագէ 'ի ծանրաբարոյութիւն՝ եթէ ոչ 'ի թանձ-

քամտութիւն : Մեծացուցանէ նա զամենայն զճշմարիտ կատարելութիւ նորս յերկնակայութեան իւրում , և կամ կոյր է պաշտպանութեանց նր՝ և կամ փոխարկէ զնոսա ՚ի գեղեցկութիւնս : Զօրէն ուրուք իրազեկ եղելոյ զմտաց՝ նախանձի զի ամենայն աչք տեսանեն զնա . և առ ՚ի քաջ խորշել յայտմանէ՝ հեռի կացուցանէ զինքն յամենայն դուշնակաց դիտողութեանց հասարակ սիրելութեան :

Սիրտ և հանճար նորա քաջերգոծեցին ըստ ամենայն մասին ՚ի սերելութէ իւրմէ : Բարք նորա եղելին առաւել ևս համեստ , և զրուցատրութիւն նորա լցի առաւել հաճելի · սակայն յուսաբեկութիւն և ծախողութիւն մշտաոյէս պատճառեցին նմա երկիւղ անմխիթար յընկերակցութեան սիրականի իւրոյ : Եթէ հրապուրողութիւնն անեցոյ ընդ երկար , մինչդամայն ընկճեցոյց զհոգի նորա և

ցիշուսցէ զամենայն զօրծաւոր՝ հզօ-
րեղ և զօռնացի խոհմունս մտաց
նորա : Տեսանելոց էք զայս բան
գեղայօրէն և բարբացուցումն նկարա-
գրեալ ի գիրս զանուան Թոովմայի :

Յորժամ տեսանէք ՚ի
բարս սեպուհոյ միոյ գնչանս պայ-
տօոնկ՝ զորս ՚ի վերայ յիշատակե-
ցի՝ խորին մտածութեամբ խոկա-
ցէք թէ զինչ ունիք առնել : Եթէ
արժանաւորութիւն նորա հաճելի է ձեզ՝
թողում ձեզ առնել զոր բնութիւն
թելադրէ · խոհականութի և ազնո-
ւաբարոյութիւն առաջնորդ լիցին
ձեզ : Եթէ սիրիցէք զնա՝ թոյլ
տուք ինձ խորհրդատրել զձեզ առ
՚ի չբացայայտել նմա զերկար տարա-
ծութիւն սիրոյ ձերոյ · և ոչ այնա-
չափ միայն՝ այլ և եթէ ամուսնա-
նայցէք ընդ նմա : Այգ լիովին ցու-
ցանէ զնախընտրութիւն ձեր · զոր
արժան է նմա ըստ ամենայնի գիտել :
Եթէ ազնուաբարոյ եղիցի նա, ոչ
պահանջեսցէ ՚ի ձէնջ զառաւել

հզօրագոյն յարգոյց սիրելութեան ձերոյ վասն ձեր. եթէ խոհական իցէ, ոչ խնդրեսցէ զայն վասն իւր: Այս է ճշմարտութիւն իմն անհաճոյ, ամենայն հարկ 'ի վերայ իմ կայ առ 'ի ծանուցանել զայն ձեզ: Մաստիկ սէրն ոչ կարէ տևել, և գնեալ ոչ կարէ արտասանիլ, երբէք յերկուց կողմանց ևս. եթէ ոչ հաստատուն ելք նորա՝ թէպէտ և ծածկեալ՝ է յագուրդ և տաղտկութիւն: Անուշութիւնն այսորիկ աղագաւ եղեալ է 'ի վերայ ձեր զամօթխածութիւն:

Եթէ տեսանիցէք ընդյայտնի ապացոյց սիրելութեան սեպուհոյ միոյ՝ և եղեալ իցէք 'ի մտի ձերում առ 'ի թագուցանել զգաղտնիս սրտից ձերոց 'ի նմանէ՝ որպէս միշտ յուսայք զի բարեսրտութեամբ վարեսցի նա ընդ ձեզ որ գրաւեսցէ զսիրտս ձեր՝ վարեսջիք ընդ նմա պատուասիրութք և մարդասիրութեամբ: Մի տայք

Նմա տարաժամիլ ՚ի թշուառացուցիչ երկմտութեան, այլ փոյթ տարջիք առ ՚ի զգուշութեան, նմա զխոհեմութեան մտաց ձերոց ցուցնէք:

Թէ և սիրտք մարդոց պատրիցեն զնոսա՝ հաշիւ ուրեմն զոյ անձն որ՝ որ սիրեսցէ զոք ՚ի ժամանակի իւիք առանց գոյզն ինչ երկար յուսոյ յաջողութեան: Եթէ կամիցիք անշուշտ անպատիր առնել զախրական որ՝ հնար է ձեզ առնել զայն պէտպէս եղանակաւ: Գոյ ՚ի վայր ձեր տեսակ ինչ միզմ ընտանութեան՝ որում հնար է բաւարարել, զնա՝ եթէ խոհական իցէ նա՝ զի չունի ինչ յուսալոյ: Սակայն զուցէ յատկական բնութիւն ձեր անբաւական իցէ առ ՚ի առնել զայս: Հնար է ձեզ զգայուցանել նմա միջամայէս՝ զի կամիք ՚ի բացեայ լինել յընկերակցութենէ նորա. այլ սակայն եթէ նա ախտաբեկ որ իցէ՝ զորոյ զբարեկամութիւնն ցանկայք պահպանել՝ չէ պատշաճ ձեզ ստ.

'ի ընտրել զայս եղանակ խորշման՝ քանզի յայնժամ զրկիք 'ի նմանէ ըստ ամենայն մասին : Զգուշիք ունել զհաստարակ բարեկամ մի առ 'ի բացայայտել նմա զբանս՝ կամ 'ի հայթհայթել զպէսպէս հնարս, եթէ կարի յոյժ փոյթ տանիք առ 'ի բաց բառնալ 'ի մտաց նորա զերկբայութիւն :

Այլ սակայն եթէ խորհեալ իցէք հակառակ այսոցիկ ամենայնի՝ գոնեայ մի՛ կորուսանէք զպատեհս իմանալոյ զբացայայտութն խոկմանց նորա : Եթէ առնիցէք զայս՝ առնէք զգործ խժդժութեան և անարգարութեան : Եթէ բացայայտեսցէ ձեզ զխոկմունս իւր՝ տարբէք նմա զքաղաքավար՝ այլ հաստատուն և վերջաւորեալ պատասխանի : Զինչ և իցէ եղանակաւ բացայայտեսջիք նմա զմտածմունս ձեր. եթէ իցէ նա այր խոհեմամիտ և ազնուաբարոյ՝ ոչ է պատճառելոց ձեզ զառաւել նեղութի,

և ո՛չ է դիմելոց առ բարեկամս ձեր վասն խնդրելոյ զմիջնորդութիւն նոցա: Վերջինս այս է եղանակ մի սիրահարութեան՝ զոր ամենայն խոհական անձն անարգեսցէ: Նա ո՛չ աշխարհեսցէ և ո՛չ զհետ պնդեսցի գիթութեան ձերոյ: Այդ այնպէս վիրաւորելոց է զնա՝ որպէս կշտամբութիւն ձեր: ՚Ի կարծոյ հնարաւոր է ձեզ բեկանել զայսպիսի սիրտ մի՝ այլ ո՛չ նուաճեցուցանել զայն: Մեծ հպարտութիւն մտապէս հեռաւորդ է այնու ապարոյութէ և թագուցեալ իցէ ընդ երեւութիւն անհնարին համեստութեան և մեղմութեան՝ և է կիրք իմն դեր քան զամենայն դժուարանուած:

Հնա՛ր է երբեմն կնոջ ուժք պատրող լինիլ ՚ի սիրահարութեան տրդարապէս մինչև յայն չափ՝ զոր խղճմտանք իւր թելադրէ: Այս պատահի ուրանօր սէպուհ ոմն յառկապէս չհամի առ ՚ի յայտնել զծածուկս մտաց իւրոց՝

մինչև գտցէ զյաջող ժամանակ շահ-
ելոյ զհաւանութիւն նորա: Այս
տարրն գիտեալ է 'ի պարտաւորել
զնէն որք առ 'ի փանդ առնել զան-
տարակոյս արտօնութեանցն սեռին
իւրոյ, արժէնքն՝ զարքոնութեան
զլնալոյ. գիտութիւն սորա է 'ի հար-
կեցուցանել զնա առ 'ի լիովին յայտ-
նել զգաղտնիս նորա՝ մինչչև սե-
պուհն հաճեցեալ իցէ առ 'ի առ-
նել զայն, և այսու առ 'ի բռնա-
դատել զնա 'ի խոնդարել զհամբա-
տութիւն և զզնաճարարութիւն
սեռին իւրոյ, և 'ի փոփոխել զգե-
ղեցկագոյն կարգ բնութեան: Բա-
կանդակ նուէրս այս գիտեալ է
միայն առ 'ի յագեցուցանել զամե-
նադարձ ունայնասիրութիւն առն
միոյ՝ որում հնար է վստահանա-
ւել, զինչ խոկ կինն՝ զոր կամ-
առնել ամուսին իւր:

Այսպէս հարկաւոր իմն է
առ 'ի գիտել՝ թէ արդեօք սեպուհ
ամն՝ որ ունիցի զերկոյթ լինելոյ

օրքաչան ձեր՝ յապաղի առ ՚ի խօսիլ պարզօրէն ՚ի շարժառթէն յինէն յիշատակելոյ, կամ ՚ի յուսադրելոյն իմիք՝ որ անտանջատ է ՚ի ճշմարիտ սիրելութենէ: Ի միում պատճառի հաշիւ երբէք հնար է ձեզ վարիլ ընդ նմա նենգաւոր, և ՚ի միւսում պարտիք ցուցանել նմա զանհնարին մարդասիրութիւն. և անհնարին մարդասիրութիւնն՝ զոր ցուցանիցէք նմա, եթէ եղեալ իցէք ՚ի միտս ձեր առ ՚ի խնուլ զականջս ձեր ընդդէմ բանից նորա, է ծանուցանել զայն նմա կարի փութանակի:

Գիտեմ զպէսպէս հրաժեշտս՝ որովք կանխայք ջանահնար լինիլ առ ՚ի արդարացուցանել զինքեանս յաչս աշխարհի և խղճմտանաց իւրեանց, յորժամ ներհակս գործեսցեն: Երբեմն զանգիտումն խոստովանին, կամ գրեթէ զանհաստատութիւն ճշմարիտ մտածմանց օգտակոյն այնորիկ: Այդ

մինչ հնար է երբեմն պատահիլ ։ Երբեմն պաշտպանեն զպարկեշտութիւն սեռի իւրեանց, որ տայ ունիլ զնոյնպիսի բարս ամենայն մարդոց, և արգելու զնոսա առ ՚ի համարիլ զայր ոք իբրև զիւրական՝ մինչ չև ստացեալ իցէ նորա կայն քաջայայտաբար ։ Գուցէ սակաւ կանայք այսքան մտածեն զազնուաբարոյութենէ և զպարկեշտութենէ իւրեանց՝ որքան ես մտածեմ ։ Այլ սակայն պարտ է ինձ խոստովանիլ՝ զի ոչ է պատեհ ձեզ պաշտպանել զպարտաւորութիւն այսօրինակ առաքինութեանց հակառակ վեհագոյն առաքինութեանցն՝ երախտագիտութեան, արդարութեան և մարդասիրութեան ։ Արդ այն արժան է այսօրինակ ամենայնի, որ նախադասէ զձեզ գեր քան զամենայն անձինս սեռին ձերոյ, և որոյ մեծագոյն տկարութիւնն գուցէ իցէ այս նախադասութիւն ։ Ճշմարտուէ սոբլին է ունայնութիւն ․ և սէր

գեղահարութեան այնքան սաստիկ կիրք իմն է 'ի միջի ձեր, մինչև տեսանէք զի մեծ իմն նուէր 'ի բաց թողուք 'ի ձեռաց ձերոց յորժամ անհոգանայք ցիրականաւ միտով, մինչ ամենայն հնարք կեղծուպատիր սիրահարութեան անկարանան առ 'ի պահպանել զնա, և կամ բռնադատէ նա առ 'ի յայտնել զկամս ձեր: Հնար է ձեզ ըղձակալ լինել սիրոյ, յորժամ անփոյթ իցէք և կամ զարհամարհանօ արկանիցէք զսերելեաւ:

Այլ սակայն խորագոյն և կարի հնարագէտ հայթհայթանք կեղծուպատիր սիրահարութեան 'ի կիր արկանի 'ի կանանց խոհականաց և ազնուականարոյից առ 'ի հրապուրել և անյողդողդ առնել զսիրտ առն միոյ, զոր աշխարհ և ինքեանք իսկ արժանապատուեն, թէպէտ և հաստատապէս եղեալ իցեն 'ի մտի իւրեանց առ 'ի չամուսնանալ ընդ նմա բնաւին: Այլ սակայն զգուշա-

արութիւն նորա զբօսեցուցանէ զնա, և սիրելութիւն նորա է մեծագոյն յագուրդ ունայնամտութեան նոցա․ և ոչ այսչափ միայն՝ այլ և երբեմն հնար է նոցա յաղել, միանգամայն կորուսեալք ստացուածոց, համբաւոյ և երջանկութեան նորա ։ Տէր մի՛ տուր ինձ զայսպիսի կարծիս ունիլ զամենայն անձանց սեռին ձերոյ։ Գիտեմ զի յոլովք ՚ի նոցանէ սեպհականեն զայնպիսի բարս և զքաղցրութիւն և վայելչութիւն հոգւոյ, որք բարձրացուցանեն զնոսա ՚ի վեր քան զամենայն ունայնամտութիւնս զայս, զորս մինչ ցարդ խօսէի ։

Կարծեմ զի այսպիսի կին որ եթէ ոչ կարէ ընձեռել, սիրականին իւրոյ զսէր իւր, յաճախակի փոխանէ զնա ՚ի հաւատարիմ և յանդորդյորդ բարեկամ ոք, եթէ իցէ նա այր մտացի, յամ ռամիտ և բարեխոհ ։ Եթէ յայտնեսցէ կինն այն զկամս իւր համարձակ արձակութեամբ և ազատութեամբ, պա՛րտ է նմա զգալ ըզ-

վէրս իւրև զայր · ոսկայն նոյն զու-
նակ հանգուրժեսցէ այնմիկ իւրև
զայր զոր ինչ կրէ, կրեսցէ ՚ի թագս-
տեան: Ամենայն կարծիք արժանա-
պատուութեն սևեսցեն . այլ սակայն
սէրն՝ թէպէտ և սակաւ կերակուր
պահանջէ և դիւրաւ հիւանդանայ
յափրութենէ մեք նորին, սակայն պա-
հանջէ սակաւ ինի մի զայն ։ Տեսանե-
լոց է զնա իւրև զկին մի արտմեի ·
և թէպէտ ների չիշանին, սակայն
այր քաղցրաբարոյ և բարեսիրտ մշ-
տապէս կայցի զխանդակաթութիւն
ու կին ոք, զոր միանգամ սիրեալ էր
և որ կարի բարեպէս է վարեալ ընդ
ինքեան անդր քան զոր ունէր զէտալ
վասն ուրուք ՚ի սեւէ նոցա :

Եթէ չիցէ նորա յայտ-
նեալ ումեք զգալունիս իւր, զանտա-
րակոյս իրաւունս ունի առ ՚ի խնդ-
րել ՚ի ձէնջ զի ոչ յայտնեսջիք զնո-
սա : Եթէ կին ոք ախորժեսցի յայտ-
նել ումեք յընկերակցաց իւրոց զտա-
լաբաղձին սիրելութիւնս իւր, կա-

թող է առնել զայն իւրն զգործ իւր միայնակ · այլ առկայն եթէ բարեսիրտ իցէ և երախտագէտ, ոչ յայտնեսցէ զծածուկ բան մի, որ ոչ իցէ իւր :

Աներծուպատիր սիրուհարութի արանց առաւել աններելի է և վտանգաւոր է քան զկանանց · սակայն կարի դժուարագիւտ է յայսմ երկրի : Կարի սակաւք յարանց նեղութիւն կրեսցեն առ ՚ի շահել կամ պահպանել զսէր կնոջ ուրուք, եթէ ոչ ունիցին ՚ի վերայ նորա բռնութիւնս պատճառաւորս կամ անպատիճս : Որք պարապեալք ՚ի գործառնութեն, ՚ի փառասիրութե և կամ ՚ի զբօսասիրութենէ, ոչ պաճառեսցեն ինքեանց նեղութիւն առ ՚ի հրապուրել զսէր կնոջ ուրուք, միայն սակս ունայնասիրութեան յաղթանակութեան և քեկրութեան իւրեանց ՚ի վերայ սրտի անմեղ և անպաշտպան օրիորդի միոյ : Իսկ և արք ոչ յաճախ յարգեն զոր ինչ

կարողութիւն իւրեանց միանգամայն խոստանայ ։ Այր բարեբարոյ՝ խելացի և հանճարեղ՝ եթէ 'ի բաց ցնիցէ զամենայն զպատիր ճշմարտութեան և մարդասիրութեան , կարօղ է հրապուրել զմիտս կանանց յիւնեաց 'ի միում ժամանակի , և սոյնգունակ մարթի կառավարել զկեղծուպատիր սիրահարութիւն իւր այնպիսի հնարիւք , մինչ անկարողացուցանել զնոսա առ 'ի յայտնացուցանել զասութիւն մի միայն , զոր հնար իցէ ասել ուղղակի բերանոյ ։

Այս կեղծաւորութիւն բարուց , այս հնարք պահելոյ զոք 'ի տարակուսանս , է մեծ ծածուկ կեղծուպատիր սիրահարութեան առ երկոսս սեռս ։ Այս առաւել խաժագուժ է 'ի մեզ , քանզի հնար է մեզ երկարաձգել զայն՝ որքան կամք իցեն մեզ , և շարունակել զայն որքան հաճելի իցէ մեզ առանց լինելոյ ձեր այնքան արժանի՝ մինչ զան-

գտաւոր լինիլ և ամբաստան · այլ ընդ հակառակն հնար է մեզ խորտակել զկապանս մեր , և պարտաւորել զձեզ առ 'ի յայտնել զգիտութիւն ձեր , յորժամ անհամբեր լինիցիմք ընդ կացութիւն մեր :

Արդ մանաւորաբար յամառեցայց յայսմիկ առարկայի հրաժարութեան , քանզի հնար է դմա կարի փութանակի պատահիլ ձեզ յայնմ կանուխ ժամանակի կենաց ձերոց , յորժամ սակաւ փորձառութիւն կամ ծանօթութիւն ունիցիք զաշխարհէ · յորժամ կիրք ձեր են ջերմ , և դատմունք մտաց ձերոց ոչ ժամանեալ յայնպիսի լիակատար . հասունութիւն , մինչ կարող լինիլ առ 'ի ուղղագործել ըզնոսա : Այսմ է ինձ զի սեփականեսջիք զայնպիսի գերապանծ բարս պատուոյ և ողջամտութեան , որ ոչ տացէ ձեզ մոլորիլ 'ի խաբէութի , և 'ի նմին իսկ ժամու կամիմ զի ունիջիք զայն աչալուրջ իմաստութի-

որք ապաւինով կացուցէ՝ զձեզ 'ի լինե-
լոյ խաբեցեալ :

Այլ մի յայսմ երկրի մարթի դիւրաւ արգելլել, զառաջին տպաւորութիւնս օրինոյ . և ամենայն շարժառիթ խոհեմութեան և այն-ոճաբարոյութեն տայցեն նմա առ 'ի ապահովել զբերդ իւր ընդդէմ նոցա մինչև ցայն ժամ՝ յորում առաքեալ իցէ զհաստատագոյն ապացոյցս օրէ-նութեան առն միոյ արքունաւորի , որ արժան իցէ փոխադարձ պատ-ուասիրութեան : Արդարև հնար է սրտից ձերոց անծանօթ մնալ մշտա-պէս և անխախտաբար ամենայն տը-դեանց , զոր այր ոք կարէ սեփա-կանել : Այդ լինելոց է տարտամու-թիւն ձեր՝ այլ ոչ յանցանք ձեր : Յայսպիսի կացութեան արդարև անիրաւ դատանիցիք ձեզ և օրինադա-նին ձերոյ , եթէ տայցէք նմա զձեռն ձեր յորժամ օրէնք ձեր ապաստանս ի-ցեն 'ի նմանէ : Այլ ամենայն տարա-բաղդ երկիցի վրիժակ ձեր , եթէ թոյլ

տայցէք սիրահարութեան բռնանալ ՚ի վերայ ձեր՝ մինչև հաւասարի իցէք զփոխս դարձութենէ նորա . կամ որ առաւել չարագոյն է , որ բանդորոշ գուցեն առաքինութիւնքն այնոքիկ. որք միայն կարող են հաստել երջանկութիւն յամուսնացեալ վիճակի :

Կարծեմ զի ոչինչ առնէ զկին որ առաւել ուրախ առնէ իւր, քան թէ մատնելն ՚ի գիրկ ամուսնանալն է հարկաւոր երջանկութեան : Բայց ՚ի լինելոյ համաձայնութեանն այնորիկ անպատշաճ , անտարակոյս իմն է այն՝ որպէս հազարաւոր կանայք առեալ են զնորին փորձ : Սակայն եթէ ճշմարիտ իցէ այն , հաւատալով զի այդպէս եղիցի այն՝ և յայնսակս անհամբեր սպասելով ամուսնութեան , անտարակոյս մեծ արգել լինելոց էր առ այն :

Ոչ պարտ ձեզ մտածել ՚ի բանէ տաղի , զի ոչ են ինձ կամք ամուսնանալոյն ձեր : Այլ ընդ հակառակն՝ կարծեմ զի հնար է ձեզ

տուածոյ զգերագոյն առաքինան եր-
ջանկութե յամուսնացեալ վիճակի,
քան զոր հնարաւոր լիցի ձեզ գտանել
յայլ իմն կացութեան: Գիտեմ զա-
նապաւէն և զլքեալ վիճակ հինաւ-
ուրց օրիորդաց, զտրտմութիւն և
զձայրացրոտութիւն որք փոյթ են
առ ի եղծանել զբնութիւն նոցա,
և զանհնարին դժուարութիւն ան-
ցանելոյ վեհանձնութեամբ և զուար-
թամտութեամբ ՚ի ժամանակէ պա-
տանեկութեան, գեղեցկութեան,
ողբահարութեան և պատուասիրու-
՚ի հանդարտին, լռին, անապաւէն
առանձնութեան հոլովեալ ամաց:

Տեսանեմ զի ոմանք անամուս-
նացեալ կանայք մտաւորք, խելացիք
և ախոյժք պածուցանեն զինքեանս
անկանելով երբեմն յանսաակ յըն-
թացս կենաց որ անպէս աշած է ամաց
հասակի նոցա, և մատնելով զանձին-
իւրեանց ՚ի ծաղրածութիւն օրի-
որդաց, որոց հնար էր լինել թոռ-
ունք նոցա. երբեմն վհատացուցանել-

ով դծանօթս իւրեանց յիմարաբար խառնելով ընդ առանձին գործս նց. և երբեմն լինելով ծնողք ցածուն և վատահամբաւութեան: Այս ամենայն յառաջ գայ ՚ի չափազանց զօրութենէ ոգւոյ, որ եթէ զբաղեալ էր ՚ի տան, առնելոց էր զնորա պատուաւոր և պիտանացու անդամ կենցաղակցութեան ;

Տեսանեմ զայլ կանայս անամուսնացեալս՝ որք են ազնուաբարոյ, համեստ, օրհնել իմաստուք, խոհականութեամբ և քաղաքավարութեամբ և այլ ազնուագին կանացի առաքինութեամբ. որոց, այլ անկայն են թուլաբնոյթք, ամօթխածք և մեհերոտք. տեսանեմ զի այսպիսի կանայք ընկղմին ՚ի խորս նուաստութեան և ոչնչութեան, և աստիճանաբար կորուսանեն զամենայն զերազանց կատարելութիւն վասն այսր յայտնի պատճառի, զի ոչ են միացեալ ընդ ընկերի միում, որ ունի զիմաստութիւն, զարժանա-

ւորութեն և զխոնարհութիւն առ ՝ի գիտել զյարգ նորա • որ կարող է առ ՝ի յայտ ածել զառաքինութիւնս նորա , և ցուցանել զայնուիկ արդիւնաւորութեն · որ կարող է առ ՝ի ընծեռել զայն նպաստ անդոր հոգւոյ նորա , որում այնքան կարօտին · և որ ՝ի ձեռն սիրոյ և քաղցրութեն իւրոյ կարէ առնել զայսպիսի կին ող- երջանիկ ՝ի կիր առնլով զամենայն զձիր հոգւոյ , և կատարելագործելով զնա յամենայն գերազանց արհեստի, որում հնար է սատարել լինել զբօսանաց նորա ։

Ի կարծոյ կարծեմ զի ամուսնացեալ կինակն՝ եթէ ոչ մտանիցէ ՝ի նա շարժութիւք արժանապատուութեն և սիրոյ, եղիցի երջանկագոյն քան ձեր , և արասցէ զձեզ պատուականս յաշս աշխարհի, և կարի պիտական անդամս կենդաղակցութեն: Այլ սակայն խոստովան լինիմ՝ զի ոչ բոլոր տաւականին հայրենասէր եմ առ ՝ի ցանկալ զի ամուսնանայցեն մեք

քարութեան հասարակաց: Կամիմ զի ամուսնանայցէք վասն ոչ այլ իրիք պատճառի՝ եթէ ոչ առ 'ի առնել զձեզ երջանկագոյն : Մինչ այսպէս փութացեալ եմ 'ի խորհուրդս իմ տալ վարուց ձերոց , տեսանեմ զի սիրտ իմ բաղխի 'ի խանդակաթ յուսոյ առնելոյ զձեզ արժանի սիրելութեան այնպիսի արանց , որք արժանի եղիցին ձեզ և իրաւցի լիցին զարժանապատուութիւն ձերին : Սակայն Տէր մի՛ արասցէ՝ եթէ երբէք թողուցուք զխոհեմութիւն և զանկախութիւն միայնակ կենաց , առ 'ի լինել գերիք ցնորից յիմարի կամ բռնաւորի սրբութե :

Որոշեալ այսքիկ են հանապազորդեան մտածմունք իմ , որարից ձեզ զարդարութի յորժամ թողում զձեզ յայնպիսի անկախկացութե , որ ոչ իւիք փորձեսցէ զձեզ առ 'ի առնել 'ի հարկաւորութենէ որ ինչ չէ հնար ձեզ առնել յօժարողութենէ : Այս սոյն-

գունակ զերծ կացուսցէ զձեզ յայնո-
միկ խուժադուժ նուաստութենէ
կնոջ զգացօղի՝ այսինքն ՚ի կասկա-
ծելոյ զի սեպուհ ոմն կարծէ թէ
առնէ ձեզ զպատիւ կամ զշնորհ յոր-
ժամ խնդրէ զձեզ վասն կնութեան
իւրոյ :

Եթէ կենդանի մնայցեմ
մինչև ՚ի ժամանելն ձեր յայն հա-
սակ՝ յորում կարող լինիք հոգալ վն՜
ձեր՝ և ոչ անհեթեթութեամբ փո-
փոխել զմտածմունս իմ , վարեցայց
ընդ ձեզ կարի տարբեր իմն եղանա-
կաւ քան զվարս բազմաց ՚ի ծնո-
ղաց : Կարծիք իմ հանապազ այս է
եղեալ՝ զի յորժամ հասանէ ժամա-
նակն այն՝ ծնողական կարողութե՜ն
տեղի տալ :

Յուսամ զի վարելոց եմ
ընդ ձեզ այնոճիկ գորովով և վայե-
լուչ յուսադրութե՜՝ որ պատճառա-
եսցէ ձեզ հոյիւյիօ իբրև ՚ի Բարե-
կամ ձեր : Յոյժ կացութեան մի-
այն համարեցայց զանձն իմ պատշա-

ձեայլ առ 'ի տալ ձեզ զկարծիս իմ՝ զոր 'ի յուսնեյն իմ, համարեցայց զիս մեղաւոր յոյժ, եթէ ոչ ջանացայց առ 'ի քաց մերկանալ յինէն ըստ թելադրութեան կարողութեն իմոյ զամենայն անձնական ունայնամտութիւն և զամենայն զնախապաշարմունս՝ որք վերաբերին առ յօժարամտութիւն իմ: Եթէ ոչ կամիք առ 'ի զհետ երթալ խմումս խրատու, ո՛չ դադարեմ սակս այնորիկ 'ի սիրել զձեզ իբրև զմանկունս իմ: Ընդէպէտ և 'ի յանգ երանէր իրաւունք իմ առ հնազանդութի ձեր՝ սակայն կարծեմ զի ոչինչ արձակել կարէր զիս 'ի հապից բնութեան և մարդասիրութեան:

Գրուցէ զմտաւ ածելոցիք՝ զի ամօթխած վարքն՝ զոր պատուէրեմ ձեզ ունիլ՝ և երևին ձեր համբերբէքը 'ի հրապարակական տեղիս՝ խափանելոց են զամենայն զպատեհս ծանօթանալոյ ձեր ընդ սեպուհեաց: Վարի յոյժ 'ի բացեայ եմ

՚ի գիտաւորութենէ ատոր : Զոչինչ ամօթխածութիւն պատուիրեմ ձեզ ունիլ՝ բայց զոր արասցէ յաչս սեռին մերոյ զձեզ առաւել պատուեցեալ և սիրեցեալ : Ոչ կարծեմ պատշաճ զհրապարակական տեղի ծանօթանալոյ անձանց ընդ միմեանս : Հնար է նոցա որոշիլ անդանօր ՚ի ձեռն հայեցուածոց և արտաքին բարուց իւրեանց միայն : Սակայն յառանձին ընկերակցութեան և եթ հնար է ձեզ ակն ունիլ վայելուչ և հաճելի զրուցատրութեան, զոր ոչ երբէք կամիմ զի տեսցիք : Եթէ ոչ տայցէք սեպուհեաց առ ՚ի ծանօթանալ ընդ ձեզ՝ չէ հնար ձեզ երբէք ակն ունիլ առ ՚ի ամուսնանալ սիրելութեամբ. յերկաքանչիւր կողմանէ : Սէր հազիւ ուրեք գոյանալ առանձին տեսութեամբ. եթէ այսպէս լինիցի՝ դրեթէ ունիցի զանազան հիմն ինչ : Ճշմարիտ սէրն հիմնեալ է յարժանապատուութե ՚ի հաղորդակցել ընդ միմեանց յօժա-

քաղցրութեանց և մաքրութեանց՝ և ըմբռնէ զսիրտն տղայոց իրաւակութեան :

Խրատ մի ևս ունիմ ձեզ աւանդելոյ՝ որում խնդրեմ ըզձերդ ուշիմ մտադրութիւն: Մինչչև իցեն սիրելութիւնք ձեր յարևալոյր որ՝ քննեցէք զբնութիւնս ձեր, զյօժարամտութիւնս ձեր, և զսիրտ ձեր կրօնի տատանակալդս · և տպաւորեսջիք ՚ի միտս ձեր թէ զինչ են հարկաւորութիւնք երջանկութեան ձերոյ յամուսնացեալ վիճակի · և որովհետև՝ անհնար իսկ է առնուլ զբեթէ զոր ինչ կամիցդ՝ հաստատապէս խորհեսջիք ՚ի մտի ձերում թէ զինչ պարտ է ձեզ համբերել հարկաւոր և զինչ եղծանելի :

Եթէ ունիցիք զսիրտ հակամիտեալ ՚ի բնութենէ ՚ի սէր և ՚ի բարեկամութիւն, և սեպհականիցէք զգացուածս , որք կարողացուցանեն զձեզ մտանել ՚ի ամենայն ազնուութիւնս և գեղեցկու

թիւնս այսորիկ միաբանութեանց ,
բարբառք խորհեսջիք վասն միրոն Լ. Յ.
մինչև բղձականալ եա, Իցէք նոցա ,
քանզի յարգանս ունիք գաղ. զայ
գերջանկութեան ձերոյ : Եթէ ու-
նիցիք զօրարագրութիւն՝ քանզի
հաստատեցելն մաձոցյն տալա-
բաղդութիւն իմն է այդ մերոյն
ձերոյ՝ մեծափականերոյ գայակից
բնութիւն և գայազիսի մամամունոյ՝
ուժգին արմատացեալս 'ի ձեզ ,
եթէ ունիցիք զհոանդն և զյա-
ռաջադիմութի ընդդիմամայց խանա-
դաղաաութեանց ունայնափառութե ,
և վշտագնութեանց բարեկամաց՝
քանզի կարուածելոց էք զմիայնակ
բարեկամն զայն՝ որ ո՛չ էր բնա-
ւորին վշտացնելոց զձեզ , և կարող
իցէք հանդուրժել բազմաց չուջո-
ղութեանց պատահելոց կացութեց
հինաճուրց օրէնդրի միոյ , զոր յա-
ռաջագոյն յուշ արարի , ուրեմն
զգուշիք յայնպիսի մոլեռնական
ընթերցմանց և զրուցատրութեանց

որք կարի համահանդէտ իցեն ըղձացուածոց ձերոց :

Այլ սակայն եթէ խորին վերահասութեամբ անձին ձերոյ տեսանիցէք՝ զի ամուսնութիւն հարկաւորապէս կարեւոր է երջանկութեան, պահեցէք զայն ծածուկ անապատ ՚ի սիրտս ձեր վասն պատճառին այնորիկ, զոր յառաջագոյն յիշատակեցի · սակայն ՚ի բաց խորշեցէք իսկ ՚ի թունոյ մահացուցանելւոյ յայնորիկ ամենայն տեսակաց ընթերցուածոց և զրուցատրութեանց, որք ջերմացուցանեն զերեւակայութիւնս, որք հրապուրեն և մեղկացուցանեն զսիրտն, և յառուցանեն զյօժարամտութիւնն անդր քան զչափ հասարակ կենաց : Եթէ հակառակ գործեսջիք, զմտաածէք զսարսափելի զրգիռ կրից, զոր նայն այնուհետեւ ունի յարուցանել ՚ի սիրտս ձեր :

Եթէ այս ազնուականանութիւն քարոզ անգամ մի ար-

մատուցի 'ի խորս մտաց ձերոց, և
դուք ոչ անսասջիք ասից նորուն.
այլ ամուսնասջիք անարգ և խենէշ
առաւրելոյից ազգաց, ոչ երբէք
հնար լիցի ձեզ արմատախիլ առնել
զայն կարծեալն, և ապա դառնացու-
ցանելոց է այն զամենայն ամուսնա-
ցեալ պատուհաս ձեր : Փոխանակ պա-
տահելոյ զգօնութեամբ, ազնուաբա-
րոյութեամբ, խանդակաթութեամբ
սիրականի միում, բարեկամի միում,
հաւատարիմ ընկերակցի միում յայր որք
զգօնասջիք 'ի յիմարութենէ և 'ի
թանձրամտութենէ. Նեղասրտեալ
'ի խժաբարոյութենէ, կամ վէրա-
ւորեալ յանհոգութենէ : Ո՛չ ոք
ունիք գտանել, որ գթասցի և խ-
նամասցի զվիշտս ձեր. քանզի արք ձեր
ոչ վարեսցին ընդ ձեզ չարաչար,
և տայցեն ձեզ զայնքան դրամս վասն
զգեստուց, անձնաւոր ծախուց, և
անայրին պիտոյից ձերոց, որք պատ-
շաճ իցեն տայցունածոց իւրեանց :
Աշխարհ ամէն այնորիկ հայեցի 'ի

ձեզ իբրեւ յանիրաւացի կանայս, որք ոչ էիք արժան լինելոյ երջանիկ, եթէ ոչ էիք նոյնպէս: Նա 'ի բացեալ լինիլ յայսոցիկ բազմապատկեալ չարեաց, եթէ ծրբէք զխոտեալքցէ ձեր ամուսնանալ, խորհրդատրեմ զձեզ առ 'ի առնել զը՛նթերցամունս եւ զզբօսանս ձեր այնպէս, որք ոչ շարժեսցեն զսիրտ եւ զերեւակայութիւն՝ բայց միայն 'ի գիտութիւն եւ 'ի զուարճարանութիւն:

Խրատուքս այսուքիւք ոչ կամիմ առաջնորդ լինիլ յօժարամտութեանց ձերոց. ես միայն ախորժիմ առ 'ի հաւանեցուցանել զձեզ է հարկաւորութիւն ճանաչելոյ զանձինս ձեր՝ որ թէպէտ եւ կարի դիւրին է ըստ երեւութին՝ տակայն անձինք սեռին ձերոյ հազիւ ուրեմն սոսանան զայն 'ի պէտպէս հարկաւոր պարագայս կենաց, եւս առաւել յայսմիկ՝ զորմէ են բանք իմ: Զի՞ք ինչ առաքինութիւն՝ զոր առաւել հոգունակութեամբ կա-

միմ զի սեղհաւանեօչիք՝ եթէ ոչ ժողովեալ և անդրդուելի հոգին այն՝ որ հանգչի յինքեան, որ տայ ձեզ տեսանել թէ ուր Տեայ ճշմարիտ երջանկութիւն ձեր, և զհետ պնդ-գիլ նմա կարի հաստատուն յամառամտութեամբ: Ի գործառնութիւ զհետ երթիցէք խրատուց նոցա՝ որք առաւել բարեգոյն գիտեն կնոոտ-քան զձեզ, և յորոց համեստաբարոյութն հնար է ձեզ յուսալ. տակայն 'ի գործս յօժարամտութեանց՝ որք կախին զզգացանաց ձերոց, մի՛ անձայք խորհրդի բարեկամի ուրուք՝ բայց միայն սրտից ձերոց:

Եթէ սեպուհ ոմն յուշ արասցէ ձեզ զգիտումն ամօսանու-իւրոյ, կամ տայցէ ձեզ տեղի հաւատալոյ զի արասցէ այնպէս, յառաջ քան զհրապուրումն սիրելեաց ձերոց ջանացէք ամենախոհեմ և զաղտնի իմն եղանակաւ առ 'ի տեղեկանալ 'ի բարեկամաց ձերոց զամենայն զկարեւոր ծանօթութիւն զնմա-

նէ , ոյաննքն՝ ըհամբաւոյ իմաս-
տութեան նորա , զօրութեան նորա ,
ըմբռնութենէ, պատուիրանաց և զգեր-
դաստանէ նորա. արդեօք հաճելաւոր
իցէ համբաւ նորա վասն առաքինու-
թեանց և արդեանց , թէ վասն յի-
մարութեան , չարութեան, և ատե-
լի ծառանգական ոխակալութեանց :
Յորժամ բարեկամք ձեր յուշ ա-
նեն ձեզ զայսոսիկ, կատարեն զպար-
տականութիւն իւրեանց : Իսկ յա-
ռաջ մատիցեն՝ ոչ ունին զայն պա-
տուաւորութիւն վասն ձեր, զոր վայ-
ելուչ մեծահանճնութիւն իմն ՚ի սակս
ձեր հարկաւորապէս պահանջէ :
Զոր ինչ ակնկալունիս
ունիցիք յամուսնանալն ձեր , ամե-
նայն հնարաւոր զգուշաւորութբ
զգաստ կացէք առ ՚ի բաց կալուցա-
նել զնոսա յորդորմանց : Իսկ բա-
րեպաշտութիւն և հեշտութիւնքն՝
զորս նա առաքերէ՝ են նպատակ ձեր .
ոչ է բաւական ըն հաստատութիւնք
ապրուստն և պարէնից որդւոց եղե-

ցին մեծ, և վայելչակն ապահովեալ. պիտոյ է զի վայելեսջիք զստացուածս ձեր ՚ի հեշտս ձեր : Գլխաւոր ապահովութին սորին՝ զոր հնար է ձեզ սեփականել՝ կախի զամուսնանալոյ ձեր ընդ բարեբնոյթ և առատաձեռն մարդոյ, որ արհամարհէ զդրամ, և որ թողուցու զձեզ կենցաղավարել ու բանոր բարւոք կարէք առնել զվայելչութիւնն զայն, և փայելել զխաղաղարդութին և ըզպայծառութիւն կենաց, յորոց սակս ամուսնացայք ընդ նմա :

՚Ի բանից իմոց դիւրաւ ունիք իմանալ զի ոչ երբէք մարթ է ինձ խորհրդատրել զձեզ՝ թէ ընդ ում ամուսնանայցէք · սակայն հնար է ինձ մեծաւ յուսադրութեամբ խորհուրդ տալ ձեզ՝ թէ ընդ ում ոչ ամուսնանայցէք :

՚Ի բաց կացէք յայնպիսի անձնէ՝ որ դիցէ ՚ի վերայ սերնդոց ձերոց զժառանգական տկարութիւն ինչ, կամ առաւել զխելագարութին

պճառանս սարսուռն յամենայն մարդ-
կային թշուառութեանց : Զախա-
ղանց անխոհեմութիւն է անկանիլ
յայսպիսի իմն վտանգ , և կարծեմ
զի մեծ յանցանք ևս է :

Ուր անուանանայք ընդ-
յիմարն . նա է առաւել անօսնձել ի
քան զամենայն կենդանիս . առաջնոր-
դեալ լինի ՚ի կրից և ՚ի ցնորից , և
անստոյգ է ՚ի լսել զձայն բանակա-
նութեան : Անտարակոյս վիշտս կր-
րեսցէ ունայնամտութիւն ձեր՝ եթէ
անուանանայցէք ԶԻ այնպիսի արանց՝
որոց փոխն հարկ գրեաջիք ամաչել և
զգուշանալ հարկանիլ յորժամ բանայ-
ցեն զշրթունս իւրեանց յընկերակ-
ցութեան : Սակայն առաւել վատա-
գոյն գործ յիմարին է մշտատև նա-
խանձաւորութիւն նորա՝ որով կար-
ծէ զի կին իւր կառավարէ զնա :
Ի յորինէ ապագայ անհնար լինի
՚ի կառավարել զնա , և մշտապէս
գործէ նա զանհեթեթս և զան-
պատշաճս վասն ոչ այլ իրիք պատ-

ծառքի, եթէ ոչ առ 'ի ցուցանել զի ձգտի առ 'ի գործել զնոսա :

Զարամանիկն է մշտապէս այր կատարեալ, քանզի ծանօթ է նա միայն անարգ անձանց սեռին ձերոյ : Սա ևս նոյնգունակ զնէ զանարգագոյն տեղարանս 'ի վերայ ամուսնոյ և որդւոց իւրոց, եթէ սարսափաղ իցէ առ 'ի լինել հայր :

Եթէ բարեպաշտութեն նշոյլ ինչ ունիցիք յանձին ձերում, մի' խորհիք զայնպիսի արանց' որք չունին զայն : Եթէ խոհական իցեն նոքա ըստ բաւականին' ուրախ եղիցին զի բարեպաշտ էք դուք մի- նոցա և լաւն զերդաստանաց նոցա, ամենայն ներհաշտեցուցէ այն զարժանապատուութիւն առ ձեզ : Սակայն եթէ իցեն նոքա արք տկարամիտք, մշտամիտ, վշտացուցեն և զզուեցուցացեն զձեզ առևս ոտիզքանց հաւատոց ձերոց : Եթէ իցէք մայր որդւոց' կրեալց էք զդաստիարակին վիշտս' տե-

առնելով զամենայն զջանս ձեր յուղղ-
ղել զմիտս նոցա յառաքինութիւն
և ՚ի բարեպաշտութիւն, զամենայն
զջանս ձեր յապահովել զայժմեան և
զապագայ երջանկութիւն նոցա,
՚ի դերև ելեալ, և ՚ի ծայր դարձեալ:

Որովհետև համարիմ
զընտրութիւն առն ձերոյ, լինիլ մեծա-
գոյն պատճառն երջանկութեան ձե-
րոյ, յուսամ զի առնելոց էք զայն
խորհին մտադրութեամբ: Մի տայք
տեղի յանկարծակի գրգռման կրից,
և մի՛ մեծացուցանէք զայն ան-
ձամբ որոյ: Ճշմարիտ սէրն ոչ
է հիմնեալ ՚ի ցնորս. կայանայ նա
՚ի բնութեան, ՚ի պատուական ակն-
կալութիւնս, ՚ի համանմանութն
յօժարամտութեանց և համակրութն
հոգւոց:

Եթէ ունիցիք զդիտա-
ւորութիւնս զայսոսիկ, ոչ երբէք
ամուսնանայցէք ընդ ումեք, յոր-
ժամ ոչ իցէք յանդիման կացութն
բաղդի, որ հարկաւոր է երջան-

կութեան երկրաքանչիւրոյ ՚ի Ճենս: Յօժարամտութիւնք ձեր միայն են կարող ՚ի լմնալ, թէ զինչ լիցէ բաւականութիւնն այն: Անիրաւութի արտաքինք ՚ի զգուշել դոնբեռութի ափրականի մերոյ, առ ՚ի սրբանել զնա ՚ի վիշտս. և եթէ տանին նա զգաստի ինչ, ոչինչ անձնական յագուրդ փոփոխեսցէ զնա առ ՚ի տանել զայնպիսի միաւորութիւն, որ արասցէ զձեզ այլերջանիկ: Բաւական է եթէ զայնքան տոտոգուծս ունիցիք, որք լցուցեն զամենայն զպիտոյս ձեր:

Անբեցից զբանս իմ ջանալով առ ՚ի բաց վարել զդժուարութիւն ինչ, որ բնական այս պատահելոց է կնոջ ու ամէն խոհականի ՚ի պատճառս անմուոնութե: Զինչ եղիցին այնուքիկ զտութիք քաղաքակարութեան, այն վեհանձնութի մերոց, որք սատարին ամենայն ընտանութեանց, և արգելուին զդանկութիւն ՚ի պատառմանց և յաւուր հեծացման: Ի պատասխանել սմին

ռոսցից միայն՝ զի եթէ շարժա-
ւիցէք շահու կամ ունայնութեան սա-
նիցին զմասն ինչ 'ի դիտաւորու-
թեանս ձեր յամուսնանալ, ոչինչ
'ի ցնորական մտածմանց աստի պատ-
ճառեսցեն ձեզ զցաւ ինչ. և ոչ
այսչափ միայն՝ այլ և իսկ ընդ իսկ
երևելոց են յաչս ձեր այնպէս կա-
տակելի՝ որպէս անտարակոյս միշտ
երևեալ են յաչս սրանց ձերոց:
Նոքա էին մտածմունք, որք
ծածկեալ են յերևակայութիւնս
ձեր, սակայն ոչ են ժամանեալ
ամենևին 'ի սիրտս ձեր: Այլ
սակայն եթէ մտածմունքս այսոքիկ
էին իրաւապէս ճշմարիտ, և ե-
թէ ունէիք զմիայնակ երջանիկ
բաղդ սիրելոյ զնոսա՝ որք հասկա-
նան զնոսա, ոչ ունիք զիրաւունս
երկնչելոյ:

Ամուսնութիւն արդարև
'ի բաց մերժեսցէ միանգամայն
զհրապուրանս՝ յարուցեալս յար-
տաքին գեղեցկութենէ. այլ սա-
կայն առաքինութիւնքն և շնորհքն

այնոքին՝ որք գառոյքին չեռոյին
զսիրտ՝ ամօթխածութիւն և ազնը֊
ուական բոյսութին այն՝ որք մշտապէս
թողին սիրականին զաւելի իմն
ցանկալայ, և յաճախակի արալին
զնա երկբայ զգացողութենէ և
զսիրահարութենէ ձեռնէ՝ մօտեցեն և
առաքին մօտ յորաժամ : Գործի-
կելից հարկաւորապէս տեղի տայցէ.
տակայն զհետ եկեսցէ նմա այնպի-
սի իմն սիրելութիւն, որ շարժէ
զսիրտն առաւել հաստատ, առա-
ւել զգացող, և առաւել խանդակաթ
իմն եղանակաւ : Այլ տակայն պար-
տիմ առաւել ինձ, և ոչ պարապել
յայնպիսի նկարագրութիւնս, որք
մոլորեցուցեն զձեզ, ես և կարի
զգացողութեամբ յարուցանիցեն ըզ-
միշողութիւն երջանկագոյն աւուրց
իմոց, զորս գուցէ բարեգոյն լինէր
ինձ մոռանալ յաւիտեան :

Այսպէս աւանդեցի ձեզ
զկարծիս իմ զոմանց կարի էգտա-
կարագոյն իրաց աղագայ կենաց
ձերոց, որք գլխաւորապէս դիտեալ
են վասն այնր ժամանակի, յոր-

ում զառաջինն մտանէք յաշխարհ :
Ո՛ ընծայեցայ եմ առ 'ի բացեայ լի-
նի, յորմանց մանաւանդ կարծիայ՝
ցորս 'ի լինելոյ նոցա հակառակ
ընդհանուր ստիպողութեան աշխար-
հի՝ իրաւացիս կարծեմ զի ոչ են
պատշաճք և տարերապատեհք : Այլ
սակայն 'ի գրեն իմ առ ձեզ՝ եր-
կնչիմ զի մի իմ էր կարի յույժ լի
և կարի քերմապէս հոգւոյն առ 'ի
թոյլ տալ ինձ պահել զայս յամառա-
մտութիւն : Այս պատճառաւ, հի-
ցէ տալ մեզ ինչ, և զերբեալ ընդ-
դիմամբ սորութեան : Ամենայն
գրեալքն իմ եղէն ըմբռնմունք քանի
մի առանձնական ժամուց, և սասա-
բեալ են առ 'ի բաց վարուէ, զո-
մանս տրտմալի մտածութիւնս :
Խոստացեալ եմ՝ զի յանձն առի զայս-
պիսի հանդարձ՝ որում եմ կարի ան-
համեմատ ․ այլ սակայն կատարեալ
եմ զմտաւ ինչ 'ի պարտականութե
իմմէ : Գրեթէ ունիք դուք հա-
ձեռ, Ը այն՝ հարկ ընդ վերջին նշան
ներոյ և հրաժարման հօր ձերոյ :

ՎԵՐՋ :

# ՑԱՆԿ:

Ներածութիւն : երես 9
Արօն : 14
Բարոյք և վարք : 29
Զբօսանք : 46
Բարեկամութիւն · սէր , և ա-
մուսնութիւն : 61

# ՍԽԱԼԱՆՔ։

| | | |
|---|---|---|
| էջ· | տող· | |
| 16 · | 13 · | ախորժումն ։ աժխուժումն։ |
| 18 · | 8 · | զուարճալով ։ զուարճանալով ։ |
| 22 · | 24 · | տարաձայնութեին ։ տարաձայնութիւնն ։ |
| 29 · | 10 · | դադարէց ։ դատարէ ։ |
| 38 · | 16 · | ճշմարուն ։ ճշմարտուն ։ |
| 47 · | 18 · | ՚ի բացօդեայ· ՚ի բաց օդս։ |
| 83 · | 8 · | զայսոռիկ · զայսոսիկ ։ |
| 107 · | 16 · | կարուսանելոյ · կորուսանելոյ ։ |

# ՀԱԿԻՐՃ ՎԱՐՔ ԹԱՐԳՄԱՆՉԻ ԳՐՈՑՍ:

'Ի հեռուն հնումն սովոր էր դրագիտաց առ 'ի գրել զվարս անձանաւոր անձանց առ 'ի յիշատակ անմահ գործոց նոցին և 'ի յորդոր ընթերցողաց: Ապաքէն՝ այս փոյթ թէպէտ առ նախնիս մեր գոյր և մինչ ցարդ դեռ ևս գոյ, բայց ոչ է յաճախեալ որպէս արժան է. ուստի կամելով մեր հետևող լինել նախնեաց մերոց՝ արժան համարիմք համառօտապէս գրել զվարս արժանաւոր Պարոն Մ. Յ. Աշանուրեանց՝ մեծարոյ աթոռակալին մերոյ, առ 'ի անմահ առնել զաշխատութեան նորին յիշատակ 'ի մերայնեսց միջի:

Արժանաւոր այրս այս է չորրորդ որդի Պարոն Յարութիւն Սհակեան Աշանուրեանց՝ ծնել 'ի Բասրայ 'ի 21 Սեպտեմբերի, յամի 1795: 'Ի հասակի երկուց կամ

երից ամաց տնօրինմամբ ծննդեան իւրոյ տեառն ՚ի Մադրաս : Յորժամ եհաս ՚ի չափ ընդունակութեան ամին՝ առաքեցաւ ՚ի դպրոց յարգելի սրբազան Յակոբոսին Մրդացարեան , ուրանօր ուսաւ հայերէն գրնթերցմունս : Զետ քանի ամաց դարձեալ տնօրինմամբ ծնողաց իւրոց ածաւ ՚ի Բոմբայիս , և յանձնեցաւ ՚ի ձեռս Տեառն Յակոբոս արք եպիսկոպոսին Ջուղայեցւոյ ՚ի հոգաբարձութիւն քերականական արհեստի : Այսպիսի սիրելի եղելոյ առ ծնողսն վարժապետի և ծանօթից իւրոց սակս առնացի պատուախնդրութեան պէսպէս հարցմանց , որոց առնէրին նմա , յայն սակս և դատեցաւ գոյ ընդունարան ջանաջաւոր հոգւոյ : Յետ եղանելոյ դասատուին իւրոյ ՚ի քաղաքէ անտի մուծաւ ՚ի դպրատունն Անգղիացւոց առ ՚ի ուսանիլ զնոցա բարբառ : Զբաղմունք և զբօսանք նորա էին ընթերցմունք գրոց և բարեպաշտութեանց , և չէրան-

առնդն ունակութեամբ հռնապաշ
ըղձաձկտեր ածականին :
՚Ի ժամանել անդ տնօր սքազան Փի-
լիպպոս տրք եպիսկոպոսին Իզմի-
ածնի՝ ձեռնադրութեամբ ընկալաւ
՚ի նմանէ զաստիճան ջահընկալութե
և զհրաման աւագ սարկաւագութե.
Թէպէտ և յառաջագոյն կամէր ընկալ-
նուլ զսարկաւագութիւն, սակայն
արգելաւ ՚ի ծնողաց իւրոց սակս
թերահասակութեան իւրոյ. իսկ և
վիճակեցաւ աստիճանին սբոյ՝ և
եւ ջերմեռանդութեամբ յածախէր
՚ի գործս բարեպաշտութեան :
Մինչ այսանակ վարուք կենցաղա-
վարէր՝ յաջողութեամբ բարձրելոյն
յառաջադրեցաւ նմա ՚ի ծնողաց իւր-
ոց գալ ՚ի Մալթա. ուրանօր
համախորհուրդ լեալ մեր ընդ մի-
մեանց՝ ներշնչմամբ հոգւոյն սբոյ
յամի 1818. ՚ի 27 երորդին Մա-
յիսի հաստատեցաք զմիաբանութի մի
Իմաստախնդրեան առձայնեալ. որ
հայի յօգուտ և ՚ի պայծառութի
ազգի. և սակս երկցութեան հա-

սակի և սկզբնապատճառ լինել ոյնո-
րա՝ ընտրեցաք զնա աթոռակալ :
Յամի 1819, ՚ի 14 Յուլիսի ա-
մուսնացաւ է պարկեշտութեան Օրի-
որդ Մարթայու՝ ընդ երրորդ դս-
տերն Աղայ Յովհաննիսի Սար-
գսեան : Յամուսնութենէ սորա ե-
ղև օրինօք եղբայր եօթն քերց. և
եղբայրական սիրով վարեալ ընդ
նոսա՝ ձեռն էարկ ՚ի թարգմա-
նութիւն առաջիկայ գրոյս, առ ՚ի
վերընծայել զայն Տիկին Հռիփ-
սիմեայ Աւետ Աղաբէգեան, որ
յայտ է ՚ի կանխաբանութեն գրոյս.
այլ սակայն այն ինչ սպասէր տպա-
գրութեան նորին՝ յանկարծակի
յափշտակեցաւ ՚ի Կալորայ Մար-
քոսէ. և ՚ի սուղ ժամուց միջի ե-
լեք զայս աշխարհ ցաւալի, ՚ի 26
ամաց հասակի. և եթող զբազում
ազգականս, զբարեկամս և զմիաբանս
իւր առ ՚ի աշխարել զտարաժամ
կորուստ նորա ողբալի. ՚ի մահ-
ուանէ սորա դատարկութիւն իմն
պատճառեցաւ ՚ի գրաւորական միա-
բանութեան միջի :